Anc ti wph, Նորեկ տարի, Aniluhu Abring Ubghp-qpbw, Mayulu il on Թենևասահ, Որ արևի Yun drupand, Znys ne zwifth Umate wydadynd Usy & yound Owyhh dpphy. Put tour Southands Pn Sneumphy Uzen dbph, Փոքրիկ, չընչին, Subned & hund Unin & danspluibu ti tumbu, Նորեկ տարի,---Մի խոտ, մի բույս, N', wylappe

Մի երկիր է Տվել մեզ կյանջ, Մի երկինջ է

## 60 U.UU.84...

## ՄԻ ՀԱՌԱՉԱՆՔ

#### ԱՑՎԱՋՌՎԾԿՈՒ «ՍԵՎ ԾՈՎԻ ԱՓԵՐԸ» ՆեԿԵՐԻ ԱՌՋԵՎ

bu mbum Suhm Տաղանդի մի գործ՝ Uterman Anternah Ափեղոն այեկոծ. Shum brilumphija dwinhny abd-abd. Shaw, Shugu, bi uppmu pugyby. Եվ Նրդա միջից, Որպես վանդակից Արծիվը դերի, Մի կարոտայի Lunwywig Bowy, Ծուխ դարծավ, կորավ Դեպի ծայրերը ha Swinbuhah, Դեպի՝ վայրերը ha mugme himuph

υβά δη ορ, υνάπ'ςς εύιξάρ, Գաւս այցելու իմ շիրմին, Ու υπρωρπιյο վատ ծաղիկներ Տեսնես փըռված չորս կողմին,

Υπι չը կարծես թե հասարակ Ծաղիկներ են սաջիդ տակ, Կամ թե գարունն է այն բերել, Իմ նոր տոմտը զարդարճլ։

Όρωնς չերգած իմ երգերն են, Որ սրտումըս ես տարա, Նըրանς սիրո այն խոսցերն են, Որ դեռ չասած ես մեռա։

Նրանը իմ ջերմ Տամբույթներն են, Այն աշխարքից ուղարկված, Որի ճամփեն բո առջև Գերեղմանով է փակված...

#### ቆቁŝስኮኄ ቢያዳሪቦ

Գու մի՝ Հավատա ժրպտուն աչջերին. Շատ անգամ նրրանջ ծաղիկներ են վառ, Բուսած կորըստչան անգունդի ծայրին, Միամիտ մարդկանը ջարջելու Համար։

ԱՀա պոետն, էլ պատրանքով Հարբած՝ Գերվեց մի անգամ ժրպտուն աչքերի, Ու որքա՞ն տանջվեց, տառապեց խաբված, Ու որքա՞ն սրրտում գանգատներ ունի...

Դու չատ մի՛ խարվիր ժըպտուն աչքերից. Շատ անգամ նըրանք ծաղիկներ են վառ, Ծըլում են սըրտի ավերակներից, Տրխուր հատակը ծածկելու համար։

ԱՏա պոհտն էլ՝ տառապած մի մարդ, Որ սրտում աջնջան գանգատներ ունի, Բայց ՏաՏախ աջնպես ժրպտում է զրվարթ, Ասես թե ջեղնից թախտավոր լինի։

## ԵԲԿՈՒ ՍԵՎ ԱՄՊ

Վաղուց βողած բարձր ու կանաչ Գահը իրենց հանդըստության, Երկու սև ամպ, հողմի առաջ Գընում էին հալածական։

ζηηθη υωկωιν չωη ζπυωυρηή Ρωσί ές, γημες ζη կωρεύοια, Μερωύ έγρωύς τωι ερήδρη Φευαιηεί τη ρηταί, υιωθατί

Ու անդապար գընում էին Քըշված Տոզմի կատաղությամբ, Իրար կըպած ու միասին, Երկու սև ամպ, երկու սև ամպ...

#### ԳԻՇԵՐ

Եկավ դիշերն՝ սփոփանբը Անմիփթար սըրտերի, Եվ սարերի կերպարանբը Փոխվեց անեզր ստվերի։

Հաղթահարված խորին ջնից՝ Պապանձվեցին ամեն տեղ, Մութն ու խավար հորիղոնից Ծաղեց լուսին փառահեղ։

Եվ երկնթում բարձր կախված Սիփան սարի կատարին, Մունջ նայում էր նա դեպի ցած՝ Տխուր նիրհող աշխարհին։

Նըրա փափուկ, արծաթահեր Հով շողերը իրանց հետ Թափում էին հանդստաբեր Նիրհ ու թեթիր քաղցրավետ։

Սակայն գիշերն այն հեգ երկրում Հանդստության փոխանակ Ահ ու սարսափ է միշտ բերում, Գաղանի հարված ու տանջանք։

Գիչեթային լռության մեջ Ծանրը տնքոց է լովում, Եվ աղաչանք, և լաց անվերջ, Եվ... ողջ լեզվով չի ասվում։ էն ճամփորդն է, ճամփի տակին Չարչարվում է կիսամահ, Էն ծնողն է իր զավակին Ողբում, կանչում... և չըկա...

Կույս աղջիկն է լրլկանջի մեջ, Ալևորը խոր բանտում... Էն կարիճն է հայրենատենչ Խիղախ հոգին ավանդում...

δή կյան μο ω μίστο τη δωύρ στη μουή ωρ Մի գիջեր է ω հավ σρ... δή σ'ή գիտ δ, σρβ\* հω մաρ Αρίστου μίω μωρή ορ:

## **ՀԱՐՈՒԹՑՈՒ**Ն

Քրիստոս Հարյավ․․․ Երկինը դնաց, Երկրում Թողեց պատվերներ. Բայց պատվերը գրքում մնաց Եվ աշխարհըը Տնծում է դեռ։

Դեռ կուրացած ժանգ արծաթից Մատնություններ են անում, Եվ փախչելով արդար դատից Միշտ ձեռջերն են լվանում։

Ապտակում ԵՆ դեռ ծաղրելով ԱՆմեղության ճակատին, Եվ հարության օր տոնելով Խալ ԵՆ հանում ճշմարտին։

Π<sup>-</sup>4, կարձամիտ անզգամներ, Դրանք այսօր կըմեռնեն, Բայց վազը ձեր փոշու վրա Նոր փառջերով կըհառնեն,

## ԲԱՑԲԸՆԻՆ

Ի՞նչ մեծ հանճարով, ո՛վ հսկա պոետ, Ազատությունը կաշկանգող շըդթան Հաշտեցրել ես դու ազատ մարդու հետ Եվ բաղցրացրել ես վիշտը գերության։

Ρ΄ δεμβα ημηληδη δα ρωίτης ζωιρόδη. δή πης μείουρξε ιμιδιμράψη τη εμίτα...

ԱՏա տանջանքի աշխարքում բընիկ Մեծարում են քեղ որդիքը Տիվանդ, Եվ արտասվում են քո անմահ երդում, Թե ոնց է մարդու Տոգին խորտակվում։

#### ԳԱՂԹԱԿԱՆԻ ԵՐԳԸ

Υμραιά կυρμαθή, το կαιτασά կυρήδο, Δωτατί-υδήσται μαιτασό τραμή στοιό Ρα απότη δυημών, γρωρατι τριμόν... Κ΄μ, το μυστάδη, σύμων αωμόσων, Λι θως το τωστάδη, τι θως τη απόρ. Κ΄μα, το μυστάδη, τι θως τη απόρ. Κύραια δη τηματί τη απόρα τη απόρ. Κύραια δη τηματί τη απόρα τη απόρ. Κόρα το τη απόρα τη απόρ. Κοματί τη απόρα τη απόρ. Δηματί τη δηματί τη απόρ. Δηματί τη δηματί τη απόρ. Δηματί τη δηματί τη απόρα. Κ΄μ, ένα τη απόρα τη απόρ. Κ΄μη τη από τη απόρα. Γ΄ματί τη απόρα τη απόρα τη απόρα. Γ΄ματί τη απόρα τη απόρα τη τη απόρα. Γ΄ματί τη απόρα τη απόρα τη τη απόρα. Γ΄ματί τη απόρα τη απόρα τη απόρα. Γ΄ματί τη απόρα τη απόρα τη απόρα τη απόρα. Γ΄ματί τη απόρα τη απ

## ԱՆԴԱՐՉ ՃԱՄՓՈՐԴՆԵՐ

Իմ անցած կյանջն ու հին տարին, Երկու անդոր ծերի նըման, Զըրույց տալով գընում էին Դեպի աշխարՏն հավերժական։

Մինն ասում էր.— Ես ունեի Թարմ ու բուրյան ծաղիկներ, Ու բոլորը մարդկանց տըվի Գտրնան գըրկովն առատարեր։

Մյուսն ասում էր.— Ես ունեի Շատ ըզգացմունջ ու կորով, Ու ողջն ես էլ նըրանց տըվի Սիրանըվեր երգերով։

Մինն ասում էր.— Ես Թողեցի Ձըմե՛ռ ու սև՛ էն հովտում։ Մյուսն ասում էր.— Ես թախծայի Մի սիրտ բեկված ու տրրտում։

Մինը ասավ.— Բայց կը ծաղկի Էն Հովիտը նորից նոր։ Մյուսը էստեղ ոչինչ չասավ, Ու գնում էր գվրակոր... Էսպես իմ կյանըն ու Տին տարին, Երկու անզոր ծերի նրման, Զըրույց տալով գընտաք էին Դեպի աշխարքն Հավերժական։

#### ԵՐԿԱՐ ԳԻՇԵՐՆԵՐ

Sանջվում եմ անդուն գիշերն անկողնում, Sանջվում հուսահատ, վաստակած, տըկար, Ու մըտբերն հոգիս հանգիստ շեն թողնում, Ու գիշերը մո՞ւթ, գիշերը երկար։

Ա՞խ, մի ժամանակ, և դեռ նոր էր այն, Մայրական գիրկ էր աշխարջն ինձ համար, Շրրճվանբը սըրտիս չէր Թը[ում ունայն, Ոչ դիշերն այսպես տաղտկալի, երկար։

էς, ωնցա<sup>°</sup>վ, գընա<sup>°</sup>ց. և' ցընորթ, և' սեր, Ե՛վ ույժ, և' եռանդ, կորավ՝ ինչ որ կար, Եկան սև օրեր ու ծանրը հոգսեր Ու դարձրին այսպես գիշերը երկար։

Տանջվում ևմ անքուն այժըմ անկողնում, Եվ հուսակըտուր, հոգնած, ուժասպառ Նայում եմ, նայո՞ւմ, դեռ չի լուսանում. Ա՞խ, այս գիշնըներն ինչջա՞ն են երկար։

## ՏԽՈՒՐ ԳԻՇԵՐ

Sμπτρ ημούρ, πρωπτισ αρουρ. Վροικά πι κα έδε μεβαιδι στότωψ Ο πιαπισ όδε στη μαθ δησές, Ρτο π'ρικοτηρη τη μαριαμότερι

-Ասա՛, իմ վի՛շտ, իմ սև թախիծ, Ա՛յ անբաժան կյանբիս ընկեր, Դու ո՞ր օրից կամ ո՞րտեղից, Ի՞նչ դեպքով ես ինձ հետ ընկել...

Ու գալի՞ս են սև-սև հուշեր... Տրիսո՞ւր դիշեր, արրտո՞ւմ գիշեր...

## ԳԱԲՆԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Մի՞տդ է գալիս մեր ջեֆն, ընկեր, Ալն Ճյուղալի ծառի տակին, Երբ գնացինը դիմավորել Նոր գարունջին ու նոր կլանջին։

Այն լավ օրից տարիք անցած, Ես այն ճամփով անցնում էի, Եվ ականջիս դիպավ հանկարծ Մեր աղմուկը ուրախալի... Պարզ ու σրոջ ես լըսեցի Այն կենդանի ձայներն, ընկեր. Շըրըխկոցը բաժակների, Աշխույժ ծիծաղ, ճառ ու երգեր...

Ու սրտաթունդ վեր նայեցի. Բալց կարոտած աչքիս առաջ Դաշտում դալար ու ամայի Մեր հին ծանոթ ծառն էր կանաչ։

Լուռ ու դատարկ մարգի վրա Մենակ կանգնած մընում էր նա, Նա էլ, կարձևս, բան էր հիշում Եվ տիրալի ձայնով շըրշում...

Մի՞տգ է գալիս մեր քիֆն, ընկեր, Այն ճյուղալի ծառի տակին... Բայց, ո՞վ դիտի, ո՞ւր ես ընկել, Եվ կրտեսնե՞նք միմյանց կրրկին։

#### **U.S'**G OPPS

Ալն օրից, ինչ որ նրան Թաղեցին, Այլևս խընդալ ես չեմ կարենում. Բերկրանը, խնդություն, իմ մեջ պաղեցին, Ծիծաղս էլ երբեր սրտանց չի լինում, Այն օրից, ինչ որ նըրան թաղեցին։

Միտքս βαչում է միշտ այն կողմերը, Ուր որ նա իջավ դալուկը դեմբին, Դեպի հանդստյան այն սև բլուրը, Դեպի հանդերձյալ աշխարհն անմեկին, Միտքս Թռչում է միշտ այն կողմերը։

## ՏՐՏՄՈՒԹՅԱՆ ՍԱՎՄՈՍՆԵՐԻՑ

Step, δինչև δ°ρε մեր աչջնրը բեղ δοնան. Մնր գույժն հասավ հեռո՞ւ-հեռոջ աղդերին, Աշխարհ լրցվեց մեր աղաղակ, մեր կական, Ու չի անցել մեր տանջանբը տակավին։

Ιδιχία<sup>\*</sup>ε, συμπέζω<sup>\*</sup> οι πρέλ<sup>\*</sup>ρίε στρηγορ διαγραφιών Φπέθρη φορδύδια φαίστραδή σεγα δαραειό, Φέ<sup>\*</sup> αταροιημέρη υψιάτητεφικάτορη φριομοιατίδια Απαριδαείθχατώς οιμαρ-οιτίωρη στήθεραταζε

Մի<sup>\*</sup>βե, աստվա՛ծ, դեռ բավական չրտեսար Այսքան ավեր, վիշտ ու ցավեր, հեծություն, Մի<sup>\*</sup>βե, աստվա՛ծ, հանհլի չեն քեղ համար Աղոβք ու սեր, կյանը ու տաղեր զըվարթուն։

Ŀ

Աստվա՜ծ, ինչպես ծուխ օրնրըս անցան, Ոսկնրջըս, խնչպես խըռիվ, չորացան, Սիրտըս ցամաջեց, ընկա խստի պես, Ճամփես մոռացա ահաղին վրշտես,

Հայրո ծախատինթն եղավ օտարի, Հանդիստըս ճամվում հալածանքների, Լըսեցի ցերեկն աղաղակ ու բոթ, Գիշերը լացի մինչև առավոտ։

Տըջնեցի, ինչպես բու ավերակում, Ինչպես միայնակ ճնճղուկ՝ տանիջում․․․ Աստվա՞ծ, տանջանբից ուժերըս հատան, Մի՞թե չըհասավ ժամը փըրկության։

# ՄԵՐ ԱՉԳԱՑԻՆ ՎԻՊԱՍԱՆ ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆՑԻՆ՝ ԻՐ ՔԱՌԱՍՆԱՄՅԱԿԻՆ

Այնտեղ ծնված ու մեծացած, Ուր դարեվոր վրշտերն հայի Ծանր ու մռայլ կան լեռնացած, Ինչպես Մասիսն այն վիթիարի։

Դու ընտրեցիր ջեզ ուսուցիչ Ազգի վերջերն ողբերգողին, Քառսուն տարի ձեռջիդ գըրիչ, Անցար, բռնած նըրա ուղին։

Հայ գյուղացին ցավեր ուներ Խեղդված իրեն խուլ խրճինում, Այն ցավերին լեզու տըվիր Ու խոսեցրիր ամեն սրրտում։

Այդ սրբաղան գործի համար, Այժմ ահա, ծեր օրերիդ, Մենք գալիս ենք երախտապարտ Պըսակ դընել ալիջներիդ։

Եվ Թող ապրի անմահ փառքով, Ով որ ցավը Թույլ Թըշվառի Կարեկցության հղոր խոսքով Դարձնում է ցավն իր աշխարհի։

#### ԻՆՉՈԴ ԱՅԴԳԵՍ

— Ինչո՞ւ այգպես ինձ մոռացար, Ասավ աղջիկն ինձ մի օր։ — Ինչո՞ւ այդպես մեզ մոռացար, Գանգատվեցին սար ու ձոր։

- Ո՞հ, մի՝ Հարցնեջ, հին ընկերնե՛ր, Ինչու էլ չեմ երգում ձեղ. Շատ եմ փոխվել այն օրից վեր, Այնպես մի ցա՞վ ունեմ ես...

— Ի՞նչ է ցավըդ, մի ճար անենք, Ասավ աղջիկն անձնըվեր. — Ի՞նչ է ցավրդ, տո՞ւր մենք տանենք, Ասին սարերն ու ձորեր։

Π<sup>-</sup>4, 2ξ, υμρη'ιύ, ξι ης δη υbp Ճար չի անի իմ υρρισμն, Դուբ էլ, անուշ սար ու ձորեր, Չեբ դիմանա էս դարդին։

Ա՜խ, իմ դարդը... Բայց ո՞նց անե՞մ, Որ իմ դարդը իմանաք. Սիրտըս խորն է, թե բաց անեմ, Սիրտըս խորն է, լեզուս՝ փակ...

#### ንስኑ ዳስ ፈዚሆቀじՆ

Գու թո մամփե՛ն գնա, թույթի՛կ, Եվ Թող լինի նա պայծառո Ինձ մի՝ ժըպտա, ինձ մի՝ սիթիր, Ես ընկեր չեմ թեղ համար։

Ելած կյանթի ամեն ճամփից, Կարոտներով անմեկին, Ագահ, անվերջ ու անհանգիստ Թափառում է իմ հոգին։

Մի ձեռը չըկա, մի գիրկ չըկա՝ Պահի նըրած իրեն մեջ, Խենթ, խնչագար գընում է նա Ձրգտումներովն իր անվերջ։

Եվ ո՞վ գիտի՝ դեռևս անմեղ Քանի Հոգի կը տանջի, Եվ ո՞վ գիտի՝ ինչ մութ, աՀեղ Անապատում կըՀանգչի...

Դու քո ճամփե՛ն գընա, թուլրի՛կ, Եվ երբ լինենք մենք Հեռու, Ազոβք արա, որ մյուս անգամ Չը Հանդիպենք իրարոււ

l

Κ΄μ, μ΄ Έι μωμ δε υωρή ψρηω Անցնում օրերն, անո՞ւշ, անո՞ւշ, Անըրջայի՞ն, βեβևասա՞Հ, Ամպ ու Հովերն անո՞ւշ, անո՞ւշ։

ԱՏա բացվեց թարմ առավոտ Վարդ է թափում սարին-ջարին, Շաղ են շողում ծաղիկ ու խոտ, Շընչում բուրմունը նդեմային։

Ա՜խ, ի՞նչ հնշտ են սարի վրրա Սահում ժամերն անո՞ւշ, անո՞ւշ, Շրվին փրչնց հովիվն ահա՝ Աղջիկն ու սերն անո՞ւշ, անո՞ւշ։

## ԸՆԿԵՐԻՍ

Իմ վեհ տենչերի, չըքնաղ վըշտերի, Վառ երազների մըտերիմ ընկեր, Դու էլ ինձ նըման պանդուխտ ու գերի, Անդուսպ կարոտով ձրգտում ես միշտ Վեր։

Այնտե՜ղ, մեր հոգու սուրբ հայրենիքում, Խաղաղ օրերի պայծառ լույսի տակ Ապրում է սերը, ժրպիտը ծաղկում, Ուրախ երգերը Թընդում ներդաշնակ...

Ρωια, ω΄μ, ύω ωινορωί, ωινορωί է Հեռու, Ու՝ մինլև այնտեղ կը Հասնենը մենը գեռ, Այնջա՞ն ենը լալու, ալնջա՞ն տանջվելու, Իմ տանջանըների մրաերի՛մ ընկեր։

## <u>ՏՐՏՈՒՆՋ</u>

Օրերս անպըտուղ, տխուր, ձանձրալի, Ու գնում եմ ես ունայն տըրտունջով Իմ սիրած մարդկանց, իմ լավ հույսերի Գերեղմանների շարջերի միջով։

Թաղել եմ նըրանց։ Տխուր է ճամփան։ Եվ իմ հայրենի աշխարհում օտար, Օտար ու մենակ անցվորի նըման, Որ չունի ընկեր, ոչ տեղ ու դադար։

Օտար են շուրջըդ ու չեն Տասկանում Ոմանք ջո վիշտը, ոմանք քո լեղուն, Անտարբեր դալիք երջանիկ օրին, Չըգիտեն նըրա կարոտը անքուն...

Չընչի՞ն մարդուկներ, լըրբորեն հանգիստ, Անսիրտ, փոքրոգի, գըծուծ ու կոպիտ. Մեռնում են, մարում նըրանց հայացրից Ե՛վ հոգու ձրգտում, և՛ սըրտի ժրպիտ։

ξι π<sup>°</sup>ιδ ωπωջին υիροπη ρωց անեυ, Π<sup>°</sup>ιδ ζωδωρ երգես υπροιωյի երգեր, Λ<sup>°</sup>ρ <u>τη</u>φή υμρեυ, **μιωύρη** udhptu, ξι μ<sup>°</sup> υχαία ωμρόυ ωδυόρ, ωδηδιάρ...

Եվ օրերս այսպես տըխուր, ձանձրալի՝, Ու գընում եմ ես ունայն տըրտունչով Իմ սիրած մարդկանց, իմ լավ հույսերի Գերեղմանների շարջերի միջով։

## ባቢኒጉስኮከ8 ԵՄ, ዳስኮፀቦኮካ

Պանդուխտ եմ, բույրի՛կ, մամուկ օրերից. Գընում եմ դեպի մի անհայտ երկիր՝ Կըտրված կյանքի ամեն կապերից, Մենակ, տարագիր,

Հալածում են ինձ անցած օրերը, Ներկա ժամերը հանդիստ չեն տալի, Հոգնած են վաղուց իմ Թույլ ոտները, • Ու սիրտս ավելի։

Բայց գընում եմ ես հալածված նորից, Ամեն վայելջից ու բախտից հետու, Նույնիսկ հայրենի հողից ու ջրից, Ինչպես եղջերու։

Եվ դու Հանդիպած իմ դրժար Համփում, Ասում ես՝ արդեն բախտավոր եմ ես. Իզուր եմ փախչում, իզուր գանդատվում Ու տանջվում այսպե՛ս...

Λ΄ ή դու միամիտ։ Բայց, երկինը վրկա, Չեմ եղել երբեք ես այդքան ըստոր, Որ կարհնալի այս դաժան բանտում Լինել բախտավոր։

Չեմ նղել, քույրիկ. բոլոր օրերը Տառապանց բերին, կորուստ ու կըսկիծ, Եվ կլանքի Տաճույքն, և կընոջ սերը Ընկան իմ սըրտից։

Ես էլ վիրավոր գընում եմ փախած՝ Անհայտ օրերի խավարի ընդդեմ, Ամենջից զրզված, ամենջին թողած, Քեղ էլ կը թողնեմ...

## . ՄԵՐ ՆԱԽՈՐԴՆԵՐԻՆ

Ορωύρ΄ էρ λός, απίζω δ δραβιώδη, Υπερ δραπιά έλο ζωη ωπωζησημώ, Ορρηρ δρωημάρω ωιμηπιά έλω ηλη, Παθή δρωηδάρω ζωιή ψηρηκηζιώδη

ՁԵր թարմ երգերում կար մի Տայրենից, Խրո՞խտ, վեճապա՞նծ, թեպետև գերի, Եվ ձեր ջրնաթի ձայներն երջանիկ՝ Լիջը ճրրճվանջով գալոց օրերի։

Ա՜խ, նա հոշոտվեց մեր աչքի առջև Եվ մեր ըզգայուն սըրտերն իրեն հետք Ոսկի երաղներ՝ միրաժի նըման՝ Մեր անապատում, չրջացան անհետ։

ος δένε μπητοιμίως δέη կյանτή δυαρη, Անհույս ու դալուկ, Δωկատներըս ցած, Ընկնում է ερύար մեր մատաղ Δάπερη, Ընկնում են սրրտից և' երդ, և' աստված։

## ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՄԵՌԵԼԸ

Ուր որ կանդնում, նըստում եմ ես, Ամենուրեջ, անմեկին, Ալջիս առջև դրրած է միշտ Մի լուռ դագաղ Թանկագին։

0°, մի՝ հարցներ՝ էն դագաղում Ո՛ւմն է դալուկ էն դիակ, Կամ թե ինչո՞ւ ես չեմ թաղում Նրրան ընդմիշտ հողի տակ։

θή περ կանգնում, նրստում եմ ես՝ Նա մի՞շտ աչքիս առաջին... Ու երը խոսում, ժըպտում եմ ձեղ՝ Ըսպասում է իմ Հոգին...

ζωψωυκτά διέ ωτίδυ վωγρηγώδ, Ρ6 πτρ πρ ξ' Αβάβ δω Φρωβ 2002β πε δωδηωήωδ Ρρ ωχρήρη βάδ ρωδω...

## ՄԱՐԳԱՐԵՈՒԹՑՈՒՆ

Այժըմ ես կրգամ, ասում է աստված. Օգնել աղջատին իր ծանըր կրովում. Չեմ թեողնի նրան Հավիտյան լրջված, Նա ինձ ապավեն կանչեց նեղ օրում։

Վա՛յ ձեզ, Տըպորներ, որ իր խըրձիթում Լացացրիք խեղձին, այրուն ու որրին, Ու վես, անպատիժ՝ ասիք ձեր սըրտում՝ Ո՞վ է վերևից նայում մեր ճամփին։

Մի<sup>®</sup>βά կարծում եր՝ չէր տեսնում, լրսում, Նա, որ ստեղծեց և՛ աչը, և՝ ականջ. Մի<sup>®</sup>βե կարծում եր՝ ուժն էր պակասում, Ե*թե համբերեց դատելուց առաջ*։

Իմ աչքերն անթարթ ձեր Համփի Լոա՝ Հրսկել եմ անքուն ես ձեր գործերին, ζι չեմ դանդաղի՝ դալիս եմ ահա, Ծս, տեր ղորությանը՝ և հաւրն իմ ձեռին։

Ου Տուր եմ ձրգում δրնչվածի Տոգին Նրա Տամարձակ լեզվով ձեզ դատեմ, Ես ուժ եմ տալիս ազբատի բաղկին, Նրա Թիկունթին՝ գալիս եմ ձեր դեմ։

# LUSAS LEALERADE

Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր, Ու մենք անհատնում Էն անլույս մըինում Երկա՜ր դարերով գընում ենք դեպ վեր Հայոց լեռներում, Դըժար լեռներում,

Տանում ննը Հընուց մեր գանձերն անգին, Մեր գանձերը ծով, Ինչ որ դարերով Երկենլ է, ծընել մեր խորունկ հոգին Հայոց լեռներում, Բարձրը լեռներում։

Բայց բանի անգամ շեկ անապատի Օրդուները սև Իրարու ետև Եկա՞ն ղարկեցին մեր քարվանն աղնիվ Հայոց լեռներում, Արնոտ լեռներում,

Ու մեր ջարվանը շրփոթ, սոսկանար, Թալանված, ջարդված Ու հատված-հատված Sանում է իրեն վերջերն անհամար Հայոց լեռներում, Սուզի լեռներում։

Ու մեր ալբերը նայում են կարոտ՝ Հեռու աստղերին, Երկընթի ծերին, Թե ե՞րբ կըբացվի պայծառ առավոտ՝ Հայոց լեռներում, Կանալ լեռներում,

## 24808 4.6686

Հայոց վիշտը անչհուն մի ծով, Խավար մի ծով ահագին, Էն սև ծովում տառապելով, Լող է տալիս իմ հոգին։

Մերթ զայրացկոտ ծառս է լինում Մինչև երկինը կապուտակ։ Ու մերթ հոգնած սուզվում, իջնում Դեպի խորջերն անհատակ։

Ոչ հատակն է գտնում անվերջ Ու ոչ հասնում երկնքին... Հայոց վշաի մեծ ծովի մեջ Տառապում է իմ հոգին։

## ՄԵՐ ՈՒԽՏԸ

Մենը ուխտ ունենը՝ միշտ դեպի լույթ, Ու գընում ենը մեր Համփով, Մըրրիկներով պատած անհույս, Սև խավարով, մութ ամպով։

Մենք անցել ենք արյան ծովեր, Սուր ենք տեսել ու կըրակ, Մեր ճակատը դեմ ենք արել Մըրրիկներին հակառակ։

Ու Թեպետև պատառ-պատառ Մեր դըրոշը սըրբաղան, Ու մենք չունենք տեղ ու գադար՝ Երկրից Երկիր ցիրուցան,

Բայց դղմում ենջ մենջ անվեհեր Զարկերի տակ չար բախտի, Մեր աչջերը միշտ դեպի վեր՝ Դեպի լույսը մեր ուխախ։

# ԸՆՏՐՑԱԼԸ

Հոդու սրրբաղան կրրակով վառված՝ Իջնում էր Մովսես լեռան դագաթից, Իջնում էր առեղ պատդամներն առած՝ Շրղթայից Հանտղ աստուծո մոտից։

δή մինչ կանխատես աչքովն իր հոզու Տեսնում էր գալոցն իր ժողովըրդի, Եվ մինլ հրճվում էր... ահա ներբևից Ձայներ բարկության ու խառն աղմուկի...

Եվ տեսավ Մովսես լեռան բարձունքից, Ժողովուրդն այնտեղ ներքև, հովիտում Աստված է շինել ոսկուց, արծաթից, Պարում է շուրջը ու հարբած գոռում.

– Ինչո՞ւ մեզ բերավ Մովսես անապատ, Լի Եդիպտոսից ինչո՞ւ հանեց մեզ... Ո՞ւր է մեր սըիստորն ու սոիսը առատ... Այնտեղ հանդիստ էր ու լիբն էր այնպես...

Գոռում է այսպես ու Տարբած պարում։ Եվ... սուրբ Սինայի մըռայլ ամպերում Կանգնեց մարդարեն, նայեց դեպի վեր. «Մի՞թե այս ամբոխն իմ եղբայրն է, տե՞ր...

ζυπωί եմ ձայնըդ լեռների գլխին, Ծավեր եմ պատռում, անցնում անապատ, Հրթեղեն սյունով տանում իր ուղին, Նա մի՛շտ կասկածոտ, նա մի՛շտ հուսահատ..

Տանջանքի միջից նրկատում եմ ես Երկիբն ավետյաց հետո՞ւ մըշուշում, Իսկ նա փոքրոգի, կույր ու կարճատես, Գերումյան սրիստորն ու սոխն է հիշում...

δή δρε ωδαβροιή μουσιά δύ εδη ζέν, Քδηδέρ ψερήσιθμων պատդամ δύ εδροιά,• Όω ωίνωδη σωδοιά σοιμ΄, ωνδιβδ΄β Ποήμ է պաշտում οι ζωρεωδ պարում...

Ինչո՞ւ հն, աստվա՛ծ, թո վեհ պատգամներ, Իմ տանջանջն ինչո՞ւ...»։ Գոչեց զայրացած, Ու մեծ խորհուրդի քարյա տախտակներ Ժայռերի գըլխից նետեց դեպի ցած...

Ρωια... διατυ ωκωվαտ, bpp np qbn ppbud, Հանգչում էp ամբոխն աղմուկից հոգնած, Իp ցուպը ձևոթին բարձրանում էp նա Գարձյալ միայնակ վե՞ր՝ դեպի Սինա,

## կԱՔԱՎԻ ԳՈՎՔԸ

#### **ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ**

Արև բացվից Թուխ ամպերեն, Կաքավ Թըռավ կանաչ սարեն, Կանաչ սարեն՝ սարի ծերեն, Բարև բերավ ծաղիկներեն. Սիրունի՞կ, սիրունի՞կ, Նախշուն կաքավիկ։ Ρη μπώ ζητιυωδ δωημβύρη η Շուշան, նարգիղ, նունուֆարով, Ρη տեղ լրցված ցող ու շաղով, Ρηδου-կելնես երգ ու տաղով. Սիրունի՞կ, սիրունի՞կ, Նախշում, կաջավիկ։

Քո թե փափուկ ու խատուտիկ, Գրստի կրտուց, կարմիր տոտիկ, Կարմիր-կարմիր տոտիկներով, Կըշորորաս ճուտիկներով, Սիրունի՞կ, սիրունի՞կ, Նախշուն կաջավիկ։

Երբ կըկանգնես մամոոտ ջարին, Տաղեր կասես ծաղիկներին, Սարեր ձորեր գլ(արթ կանես, Դարդի ծովեն սիրտս կըՉանես. Սիրունի՞կ, սիրունի՞կ, Նախշուն կաջավիկ։

էն լայն հոստներ, մեծ աղմուկի տակ Հավիտյան անշարժ, համր ու անդիտակ, Անտարրեր էն տաք, հռուն պայքարին, Անցնող օրերին, ապրող աշխարհին՝ Հղորն ու տկար Ընդմիշտ հավասար, Անխտիր հալվում Մեծ հանդըստի մեջ, Հալվում են, ձուլվում, Հանդրում են ավերջ...

#### ԾԱԳՈՒՄՆ

Ելնում է ահա նազելի փառքով Հոգուս խորքերից իմ նոր դիցուհին, Պճնած կուսության ճերմակ պսակով, Վառվելով իր սուրբ շողնրի միջին։

Ելնում է շռայլ իր փառջից շիկնած, Ցոլուն ալջերը գետին խանարհում, Թեև նրանց մեջ երկնջից ծագած Ամենից պայծառ Ճաճանչն է բերում։

Թոլում են երգերս նրան ընդառաջ, Տնորջներս աշխույժ պարում են իր շուրջ, Թուտւմ նմ և ես իմ բախտից հարբած Ու կյանբը Թեթնև Յվում է անուրջ։

#### ԴԺԱՐ ՏԱՐԻ

#### ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ

Վարի՛, գութան ջան, վարի՛, Շատ է գրժար էս տարի. Պապին տարան քյոխվի գուռ, Հարկ են ուզում.— տո՛ւր հա, տո՛ւր — Կրտամ, քյոխվա, փող չունեմ։ — Չունե՞ս, Շեկոն կրտանեմ։ - Ամա՞ն, εχημία, εξη ήπτηρωն, Շեկոն գրնա βոη գութան, Գարնան անենք վարուցանք։ Կալը կալսենք, բերենք տանք։ Գարունքը ետ դառավ էլ, Կութան լրծվեց - Տորովե՞լ... Վարի', գութան ջան, վարի', Դատենք ցորեն ու գարի, Տանենք ածենք բյոխվի փեշ, Որ չրտանի մեր գոմեշ

#### ԳԱՐՆԱՆ ԱՌԱՎՈՏ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Բարի լուսի պանդեր պարկին Զընդպընդալնն անո՞ւշ, անո՞ւշ. Լուսը բացվեց մեր աշխարհրին Ճըղճրղալեն անո՞ւշ, անո՞ւշ,

Հովտում առուն խոխոջում է Գըլգըլալին անո՞ւշ, անո՞ւշ. Քամին բարակ շընկշընկում է Ջըլզըլալևն անո՞ւշ, անո՞ւշ։

Կռունկն եկավ երամ կապած Կըռկըռալեն անո՞ւշ, անո՞ւշ, Կաբավ բարին տաղ է կարդում Կըղկըղալեն անո՞ւշ, անո՞ւշ։

Հարսն ու աղջիկ հանդերն ելան Շորորալեն անո՞ւշ, անո՞ւշ. Ծաղկանց բուրժունըն անժահական։ Սըլսըլալեն անո՞ւշ, անո՞ւշ։

## ՃԱԽԱՐԱԿ

#### **Ժ**ՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Մանի՛, մանի՛, ճախարակ, Նրստենք բանի, ճախարակ, Անտերին տեր, ճախարակ, Որբերին հեր, ճախարակ։

Լուսնյակը դուրս է եկել, Աչքերիս լուս է եկել։ Լուսնի լուսով մանեմ ես, Սիպտակ ոստեր անհմ ես, Ադքատ օրով ու լացով Яրրեր պահեմ մանածով։

Մանի', մանի', ճախարակ, Նրստենք բանի, ճախարակ, Անտերին տեր, ճախարակ, Ոբբերին գեր, ճախարակ,

Է՞հ, ո՞վ գիտի, մենք ապիկար՝ Ժամանակի խաղալիք, Ու անհայտ են միշտ մեպ համար Օրն ու սերը մեր գալիք։

Մեկ էլ տեսար, <sub>ք</sub>ո սիրելին Ընկավ օտար ու Տեռու, ՊատաՏեցիր ուրիշ մեկին Ու ժոլաացիք իրարոււ

Բայց չի տևում այդ էլ երկար՝ Նոր օր, Նոր մարդ, Նոր ալիջ, Ու ծփում ենջ մենջ անդադար, Ժամանակի խաղալիջ...

# 1 9 0 9

#### ԱՎԵՐԱԿՈՒՄ

Մոլոր, մենակ ես շրջում եմ Ավերակում հայրենի, Աշը եմ ածում ու հիշում եմ Անցած կյանջը վաղեմի։ Է՜, այստեղ էլ ժամանակով Շեն ու կենդան է եղել, Ուրիշ օրով, ուրիշ կյանքով, Ուրիշ մարդիկ են ապրել։

ԱՀա նըրանց տեղ-տըները Լուռ-լուռ փոսեր ցիրուցան, ԱՀա նըրանց շիրիմները, Մամռոտ, անշութ, աննըշան։ ԱՀա մեծի ապարանքը Ու ամրոցը կիսավեր, ԱՀա նըրանց խաղաղ վանքը, Աղոթում է կարծես դնռ...

Մթընջաղը գետինն առել, Լուռ է աշխարհը-արարած. Բեկորներին աչքերս հառել Մըտածում եմ շրվարած։ Հին դարերի մըշուշի մեջ Նըշմարում եմ ես ահա Փարթամ բաղաք, տներ անվերջ... Մեծ պայատներ... ու սրրահ... Ու սըրահը ճոխ դարդարված Վառվում է ուշ դիշերով... Էն սրահում, լուսավորված Բյուրեղյա Թանկ ջահերով՝ Հայրենիքի աղատանին Հավարվել է խընթույրի, Տոն է տոնում, տո՞ն հաղնության Իր հավատի ու ղենքի...

Ու փափկատուն տիկինները Հանդիսավոր ընթացրով Ճեմ են առնում, այր են ածում, Սեր են թափում հայացրով։ Պարիկները պար են պարում Ու դոփում են համարձակ, Ու թընդում են մեծ սրրահում Երդ ու նրվաղ ներդաշնակ...

«Վո՜ւյ...», «վո՜ւյ...», բուն էր, վայհց ամա... Մունն էւ Ու հս դըլխիկոր Էն ավերակ քաղջի վըրա Կանդնած, ինչպես մի բեկոր...

#### ՎԱՑՐԷՋՔ

Քառասուն տարի բրռնած ճանապարհ՝ Շիտակ, անվեհեր Գընում եմ ես վեր՝ Դեպ Անհայտը սուրբ, աշխարհբը պայծառ։

Քառասուն տարի ճամփովն ահարկու Անցել եմ էսպես Ու հասել եմ ես, Խաղաղությանն եմ հասել ես հոդու։ Μαηκι Εθ Σερρά, πλο ικατά ακατηρά, Ε΄ η ματορο, τ΄ ηωδά, Ε΄ η εκτι, τ΄ ταιματά Κάδυο, μές πο δουσαιά η κατρύι

Եվ էն ամենը, արդ նայում եմ ես,— Տեսնում եմ նորից Իմ լեռան ծերից՝ Էնպես Հասարա՞կ, դատարկ են էնպե՞ս...

- - -

Եվ ես իմաստուն ու բեռըս ԹեԹև, Անհոդ ծիծաղով, Երգով ու տաղով Իջնում եմ դըվարթ իմ լեռան ետև։

### PARODIA

Հովճաննես Հովճաննիսյանի «Իմ նայրենիքը ահան"լ ես, առա՛»... բանասանդծության

ers sugphthen what's bu, waw's ...

Տեսե՞լ ես արդյոք այն բլուրները, Ուր Տոխ ծաղկում է մշտական գարուն, Ուր Բալանում են մերոնը ու այլերը, Ուր հոսում է միշտ արցունը ու արյուն։

Տեսե՞լ ես արդլոր այն այդիները, Ուր իբրև դոհար խաղողն է հասնում, Որից դատարկ են նըստում տերերը, Որ միշտ ցեցերի գըրպանն է լըցնում։

Տեսե՞լ ես ծերուկ ժայռերի միջով Կատղած անցնելիս դետը փըրփըրած. Վախե՞լ ես անցնել կոտրած կամուրջով, Նստե՞լ ես արդյոք ափին մոլորված։

Տեսե՞լ ես պյուղը հովտի մեջ մենակ Ու շուրջը փըոված հին աղբակույտեր. Տեսե՞լ ես ո՞նց են այնտեղ շարունակ Կրովում, կեղեջում թյոխվեն ու տերտեր։

Եվ դու տեսե՞լ ես նրա գանձն անգին, Հարավի դուստրը՝ խըդճուկ արարած, Լռության կնիջի իրեն շրըթունթին։ Ու ինջը ամբողջ կեղծի մեջ կորած։

Տեսե՞լ ես Նրա եպիսկոպոսին Դեմբին գոհության տափակ կնիրը. Գիտե՞ս ինչ ղարդ է թաղման հանդեսին, Եվ կամ ի՞նչ արժե մատի մատնիրը։

Եվ դու տեսե՞լ ես Երա գաղեթը, Որ ազատ միտը է վաճառում Տային. Զգո՞ւյշ, բարեկամ, չըվիճես Տետը, Թե չէ՝ կրմատեր թեզ պոլիցիային...

«ha swiphupp mbub" i bu, wuw'»...

# ՍՈԽԱԿԻ ՎԻՇՏԸ ծողովթեպես

Մի օր տեսավ օտար Թրոչուն՝ Սոխակ կուլար կուց-կուց արուն. — Ինչո՞ւ, ասավ, սոխա՛կ սիրոն, Ինչո՞ւ կուլաս կուց-կուց արուն. Ինչո՞ւ, մինչ ե՞րթ դու երերուն, Տըխուր կուլաս չոր Թրփերուն, Աշխարհ ամեն վառ ջո սիրուն, էդ ճրովռան ջո երդերուն, էպ լուս ու մուն առավոտուն, էս լուս ու մուն առավոտուն, էս լուս ու մուն առավոտուն, էս լատ անուշ գով հովերուն Ախ ու վախով կուլաս արուն։ — Ի՞նչ կրխոսես, օտար Թրոչուն, Խենթ ու խելառ դու ցընտրուն. Υμωράς εμρά ωτειπτύδρατώ, Υμωράς δαυρά δωτράδορατώ, Υμωράς δαυρά δωτράδορατώ, Υμωράς δάδα μας ματητώς Ν'διτάδα τριμαί άμις-ήμις ωρατώς Κρά ματά το άμις ματητώς Δυράς της μαι άμις-ήμις ωρατώ, ζόμα της της ματητάστητώ, Κρά δωτά το άμις της τομορατώ, Κρά διατόδη στη τωράστατώ, Αωχάρω εράτα ωτητικώτητώς Γι της ωπωδ τη δωτάδρατώς

### ԿԱՔԱՎԻ ՈՂԲԸ

ժՈՂՈՎՐԴԱԿԱՆ

#### I

Կըտուցը լիջը արին Կաջավը նրստել ջարին, Ձեն է տալիս, կըզկըզում, Գանգատ անում հավջերին. Ա՛յ ջուրիկնե՞ր, Ա՛յ հավջե՞ր։

Ρπώ ζήνδος էν υωρποί, Δως ζωνδος μυνησίων, Γεμιζ μοωχω δωραδρποί, δημιν μωμινά που σωριών, Ա΄ μπορήμνδη, Ա΄ ζωνήρετη

էն կարկալուն վրղիկը Սուր դանակով զարկեցին. Էն կարմըրիկ կըտուցը Հուր կըրակին ձըդեցին, Ա՛լ բուրիկնե՞ր, Ա՛լ Հավբե՞ր։ էն մանրաջույլ տոտերը Գրարատեցին ծունկն ի վար, էն կատուտիկ փետուրը Ո՛րն արին ծոր, ո՛րը՝ սար, Ա՛յ ջութիկնե՞ր, Ա՛յ Տավջե՞ր։

ξυ, πρ υωράρδι էր Υώνει, Αωσβύ είμως φαιν ωρως, ξυ, πρ απρερίε ζη ωνημι, Ζειείς είμως πι υωρως, Ա΄, φαιρβάνε, Ա΄, ζωιζείς,

П

էլ ո՞նց անեմ, էլ ի՞նչ անեմ էն բընում. Հանդիստ չունեմ, դադար չունեմ էն բընում։ Ջօրը մենակ՝ չեմ դիմանում էն բընում, Գիջերն անտակ՝ չի լուսանում էն բընում. Անցած օրերն եկել նորից էն բընում, Գել են դառել, ուտում են ինձ էն բնում։ էլ չի մընում իմ սըրտիկը էն բընում, Ցավով լիջը, լացով լիջը էն բընում։

m

IV.

```
Վա՜լ կաջավիկ,
Սև կաջավիկ,
Չալիկ-մալիկ
Սիրուն հավիկ։
```

Վա՞լ բո Հուտին, Լն խորոտին, Վա՞լ սրգավոր Իր մոր սըրտին։

Е сво Царрый Zuxun n. аратся, Մыр парыруд Чырван тррания

Վա՞յ կաքավիկ, Աև կաքավիկ, Վա՞յ իմ կորած Սիրուն հավիկ։

### ԳԱՐՆԱՆ ՀՐԱՎԵՐ

Ρωχվάτι Έ μωρύων Ορέρη պայծառ, Υράμ"ο, βι υνήδ΄ρ, Գνωνος դեպի սար, Գրնաνος αδιά ωյνουλη, έρμνως τοι άλοκ, Υμνύρη լωινωρδωί, έρμνος πι ωρά...

Φηββαιί δύ μμηδιωύ Ծաղկաները վառ-վառ. Վե՛ր կաց, վե´թ, ընկե՛թ, Ելնենք դեպի սար. Հաղար գույներով, հաղար-հաղար ցեղ Ժրպտում են նրանը ու բուրում այնտեղ...

Կանչում են պարճան Հավքերն անհամար. Գնա՛նք, իմ ընկե՛ր, Թռչենք դեպի սար, Երդենք նրանց հետ, երկնահաս վերև, Կանքը լայնարձակ, ծաղիկ ու արև...

### ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ՋՈՒՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Ամպոտ սարեն ուրախ ձենով Ջուր է գալիս, անցնում շենով։ Մի Թուխ մանուկ դութս է վազել, Ձեռջն ու երես պաղ լրվացել, Լրվացել է ձեռջն ու երես, Ու դարձել է՝ խոսել էսպես.

— Դու ո՞ր սարեն կուգաս, ջըրի՛կ, Իմ պաղ ջըրիկ ու անուշիկ։ — Ես էն սարեն կուգամ մըթին, Որ հին ու նոր ձյունն է գլխին։

— Դու ո՞ր առուն կերթաս, ջըրի՛կ. Իմ պաղ ջըրիկ ու անուշիկ։ — Ես էն առուց կերթամ ղվարթ, Ուր ափերն են շուշան ու վարդ։

— Դու ո՞ր այգին կերթաս, ջըրի՛կ, Իմ պաղ ջըրիկ ու անուշիկ։ — Ես էն այգին կերթամ դալար, Որ տերն է ժիր մեջն այգեպան։

# ԹԵԳԵՏԵՎ ԲԱԽՏԸ ՄԵԶ ՇԱՏ ՀԱՐՎԱԾԵՑ...

Ρεφένα ρωφυνο στη γωνο Κωριβαλάς δρίμαρ դարերով, ωκεη κωριβωδοί, Ρεφένα ξυφέν σρήδο, ισωρωδές, Χρημο κατέκτη, ήρκες δοιβοδοί,

Վկա է սակայն բովանդակ երկիր, Որ մենք կարեվեր ապրում ենք կրկին, Եվ ուր հասնում է հայի դիրքն ու գիր՝ Կենդանի է դեռ հայունկան ոգին։

Եվ թարմ աղմուկով մանկունը մեր մատաղ Առաջ են խաղում լուսավոր տենչով, Եվ թնդում են դեռ Հայի երդն ու տաղ Հարազատ լեղվով, Հայրենի շընչով։

Եվ իր փըլատակ`տը⁄ների տակից Ելնում է ահա հզոր ժողովուրդ, Իր վեհ ճակատին տանջանջ ու Բախիծ, Խորունկ հայաց**բում մ**եծ կյանջի խորհու<del>րդմ</del>

Ո՜վ դուբ սրբազան Մասիս, Արագած, Էդ ձեր երկնամուխ գոհար Թագերով, Եվ որ նրանցից վերև խոյացած Փայլատակում եք լույս-պըսակներով՝ Սահակ ու Մեսրոպ, և շատ պանծայիջ, Որ լրցրիջ Հայոց աշխարհջն ու սրտեր Լուսավոր կյանջի սիրով երջանիկ Ու ձրգաում տրվիջ՝ ձրգտեյ դեպի վեր,

Քանի որ դութ կաթ, ջանի կըմնաթ, Հոյակապ սյուննը Տայության ոզու, Մենթ միշտ անսասան առաջ պիտ գնանթ, Ինչջան մեր ճամփան լինի ահարկու։

Եվ տոն կըտոնենը էսպես խնդագին, Ել թեղ իմանա բովանդակ երկիր՝ Ապրում է անմեռ հայությունը հին, Ապրում են անմահ իրեն գիրջն ու գիր։

#### ԾԱՂԻԿՆԵՐԻ ԵՐԳԸ

(ՀԱՏՎԱԾ)

Մեծ գոլն ընկավ, ձընհալն ընկավ, Հողը շընչեց, զեփյուռն եկավ, Արևն ելավ վառ Ճառագած, Հարցմունը արավ հողին հակված.

### Աւեր

- Սիրուն աղջի'կ, ի՞նչ ղըրկեմ քնղ,

### Աղջիկը

- Ես ծաղիկներ կուղեն պես-պես։

### Աւեր

-Ա՛լ աղբյուրննը, ա՛լ գետակներ, Սառցի ներջև ջընա՞ծ եր դեռ. Դո'ւրս եկեջ, գո<sup>\*</sup>ւրս, Շո<sup>\*</sup>ւտ, դեպի լուս, Նոր աշխուժով Ու նոր ուժով Կարկաչեցեջ Ու կանչեցեջ Հողում ջրնած սիթուններին՝ Ծաղիկներին ու ծիլերին։

Ջբեբը

- 4, n' 12 - 4 n' 12, 4 n' 12 - 4 n' 12, **ξ**υ μ΄ Έχρω Έ πιζ... Աղջի', աղջի', ծիլ-ծաղիկներ, Ruibh ppbbp, db'p quybp, db'p, Խրնկածաղիկ, Ծրնկածաղիկ, Unkeniphy Շար-շարութիկ Հասմիկ, հափրուկ, Ամանկոտըուկ, Zapan-Sapan Աղավնարոտ, Կոնղեղ, ճանդուկ, **Բուրդ, Տարճատուկ,** Հարսնածաղիկ, Λυμόδωημή, Խաշխաղ, ծրծուկ, Վարդ, հրիցուկ, Unizy-durgdbonily, Anim, Jundynnich, Շրրվան, մրրվան, Շուշան, ռեհան, Ապրեմ-չապրեմ, Parped-Juped... Puth prubp Sngh Shehu,

Եկեր էստեղ, սարի լանջին, Առվի ափին, Տով ըստվերում, Ժայռի տակին, Տովիտներում, Կանալ խոտով, Անուշ Տոտով, Ծիծաղեցեր Ու ծաղկեցեր

#### Ծաղիկները

— Բարև, բարև, կարմիր արև, Ա՜խ, ի՞նչ լավ է դնպի վերև— Աղա՜տ, լո՜ւյս, տա՜բ, Կապո՜ւյտ, Տրստա՜կ...

Ծաղիկները

— Սիրո<sup>\*</sup>ւմ եր ինձ...

#### Արեր

– Ա՜խ էնպես եմ սիրում, էնպե՜ս, Էլ առանց բեղ լեմ ապրիլ ես... – Ես բեղ հետ եմ ուր որ դընաս... – Ես կրաբիրեմ՝ որ հեռանաս...

### Աւեր

- Ապա եթե ձեղ Համբուրե՞մ...

#### Ծաղիկները

- Ես հաճույթից կրկարմրեմ...

- Ես կըթուրեմ...
- Ես կըմարեմ...

#### Աբեր

— Ա՛յ անուշներ, Ա՛յ բրնբուշներ, Ապրեմ - չապրեմ, բուրեմ - մարեմ. Բաժակներդ բացեք իմ դեմ, Հազար գունի, Տազար ձևի, Պայծառ, ծավի ու ծարավի, Լըցնեմ շողով, Գոհար ցողով, Ջերմ եթերով, Նուրը թըրթիռով, Կյանքի հուռով, Ա՛յ անուշներ, Ա՛յ բնբուշներ...

### Աղջիկը

-- Էս ի՞նչ անթիվ ծաղիկներ կան. Ոսկի-ղեղին, կարմիր, դեղձան, Մոռ, ծիրանի, ճերմակ, պուտ-պուտ, Ալ, նարընջի, մավի, կապուտ, Բացվել, լրցվել, ծաղկել են վառ, Ողջ ինձ Համա՞ր, ողջ ինձ Համա՞ր...

Հողմերի առջև ցրրված, Տալածված, Քարեքար զարկված, տանջված ու Տյուծված Ի՞նչ է ուզում նա դալուկ շըրթունքով, Անվերջ բողոքով, անզոր խնդիրքով. Իր փա՞ռջն է ուղում, թե թագն ու գահո՞ւյք... – Իր կլանքն է ուղում, իր պատիվն, իր գույթ. Ο΄ 2, Ξωδαμμ<sup>τ</sup>υω, Ξαμμ<sup>τ</sup>υ, μησιμ 2μ κ2βδές Ο δόμ αι δωημί, ας ωμίς εμδε, Ο μαυρίο Ξωδωμάη, ας άμης εδοραις, **Υπο δ**άδ αι ημήμιμβ, μδωυσιατίο δη αιό, Αρ δαιβίο ως μωμζερό στωδαιοί է δωμητιδο

Դեպի Լույս աշխարհը, սեր, եղրայրություն... Ամեն մի չարիը ունի իրեն վերջ Ու կա հատուցում ամեն գործի մեջ. Կա մխիթարանը տառապող հոգուն. Հացող աչըերին կա հանգիստ ու ջուն...

> Տաղով եկավ, Ախով գնաց Սայան-Նովան. Երգով եկավ, Վերբով գնաց Սայան-Նովան. Սիրով եկավ, Սրով գնաց Սայան-Նովան. Սիրով մնաց Սայան-Նովան։

#### ՎԵՐՋԻՆ ՏԱԳՆԱՊԸ

Վեր է կացել հին վիշապը Նոր Թափով, Վեր է կացել վերջին մոլի տազիապով, Արյունըռուշտ, ոճիրներով ահավոր Մահ է շընչում լեռներն ի վեր ալևոր։

Πι ύρω դեմ կլած անդուսպ, անսահման, Հորձանք տալով ամեն կողմից՝ հայության Հին-հին հույսերն ու հուգմունքը դարավոր Ծառս են լինում լեռներն ի վեր ալևոր...

Ու լեռները պառավ մոր պես վերստին Արնոտում են գլուխները իրենց հին, Միշտ խորհելով ամպերի տակ սևակնած, Որ հենց իրենց հառալանջն են կուտակված...

#### ՀԱՑՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

Վաղուց Թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է Թափառում, Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի ջեզ՝ Մըդկրտում է սիրտըս անվերջ բո Թառանչից աղեկեզ, Ու գաղԹական զավակներիդ լուռ շարբերից ուժասպառ, Ե՛վ գյուղերից, և՛ շեներից՝ տըխո՞ւր, դատարկ ու խավար, Ջարկվա՞ծ հայրենիք։

Խըռնըվում նն մըտքիս Հանդնպ րանակները անհամար, Տըրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ, Ու ջարդարար ոհմակները աղաղակով վայրենի, Ավարներով, ավերներով, իընջույքներով արյունի, Որ դարձըրին քեզ մըշտական սև տւ տուզի մի հովիտ, Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով անժըպիտ, Ողբի՞ հայրենիք, Որբի՞ հայրենիք։

Բայց Տին ու նոր թո վերջերով կանդնած ես դու կննդանի, Կանդնած խոհո՞ւն, խորհրրդավոր ճամփին նորի ու հրնի. Հառաչանքով սրրտի խորքից խոսք ես խոսում աստծու հետ Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանջներում չարաղետ, Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհքին Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ծրգտում է մեր հոդին— Հույսի՞ հայրենիք, Լույսի՞ հայրենիք։ Ու պիտի գա Տանուր կյանքի արջալույսը վառ ՝ Տագած, Հազա՜ր-Տաղար լուսապայծառ հոգիներով ճառագած, Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին, Կենսաժրպիտ իր շողերը պիտի ժրպտան առաջին, Ու պոետներ, որ չեն պրղծել իրենց շուրթերն անեծքով, Պիտի գովեն քո նոր կլանքը նոր երգերով, նոր խտաքով, Իմ նո՞ր հայրենիք, Հրզո՞ր հայրենիք...

#### ԲԱՐՉՐԻ8

Ին բարի սըրտի էն մեծ խոհերից, էն մեծ խոհերի անհուն խորերից՝ Կամեցավ՝ ելավ իմ հրվոր հոգին, Որ բարձրից նալի աստծու աշխարհբին։

Ու պայծառ ցոլաց դեպ վերին այեր՝ Մարդկային ամեն հընարջներից վեր, Վե՞ր ամեն շուջից և շամանդաղից՝ Մինչև լուսեղեն ոլորան անխախիծ։

Ու իր Հարազատ բարձունդիցը լույս՝ Անչար, անաչառ, անդորը ու անհույզ՝ Պարզ, ամենատես Հայայլովը նա Ճառագեց ներջև՝ աշխարհջի վրրաւ

Տեսավ աշխարհըը՝ գեղեցի՞կ, անվե՞րջ, Եվ հայրենիքներն անձուկ նըրա մեջ, Եվ աստվածները Նըրանց զանական, Եվ սուրբերը խիստ, խըտրող ու դաժան։

Տեսավ՝ ուտում են ամենքն ամենքին. Ամեն հայրենիք՝ իրեն ղավակին, Եվ իր պաշտողին՝ ամեն մի աստված, Եվ կլանջը տանչանջ, ցավ համատարած։

Ու ոչ մի երկիր չըկա հանգչելու.... Խոր, արարչական հանգիստն անխըռով, Ու ոչ մի անկյուն չըկա շընչելու Շունչն աստվածային՝ լի անվերջ սիրով...

Անպատում վրշտով վերըստին նայեց Իմ էս մեծ սըրտին՝ աշխարհբից էլ մեծ,— Անսահմա՜ն աշխարհբ, և սեր ընդհանուր, Եվ մարդը ուրախ, և հրդ ամենտւր...

Ու իջավ Նորից Էնտնղ Տանգչնլու... Խոր, արարչական հանգիստն անխըռով, Էնտեղ հանգչնլու, Էնտեղ շընչնլու Էն մեծ խոհերով, էն անվերջ սիրով...

#### ԱՂԹԱՄԱՐԻ ԿՂՉՈՒՄ

Սըրտիս խորջերեն Հովեն Թև ծովեն Մի ձեն եմ լրսում. Ո՛նց է մի աղջիկ Մեղմ ու հանդարտիկ Անվերջ արտասվում։

Կոպիտ աշխարհ է, Մարդը միշտ չար է, Կյանը է կործանում, Կյանըն էլ կործանված Որ անցավ գնաց, Էլ ետ չի դառնում... Uppmhu μπηρητού Σημού βο δημού Մի δού οι լρυπωί. Πώς է մի աղջիկ Մեղմ ու հանդարտիկ Անվերջ արտասվում։

«Թամա՜ր... Ա՜խ, Թամա՜ր...» Իզու՜ր... ոչ մի թառ... Չի պատասխանում։ Սերը որ կորավ, Սիթար որ մեռավ, Արցունջն է մնում...

Սըրտիս խորքերին Հովեն Թև ծովեն Մի ձեն եմ լրսում. Ո՞նց է մի աղջիկ Մեղմ ու Հադարտիկ Անվերը արտասվում...

Շուռ է գալիս ծանր ջարը Մեր մոր կըրծջից տենչավառ, Վեր է կենում մեր աշխարհը Ավերներից անհամար...

Մաիկ ավեք՝ ինչ վեհ պատկեր Մեծ հիացման արժանի, Էսքան դարեր նա քարի տակ Դեռ շընչում է կենդանի. Ու աչքերը, Թեև լացոտ, Լիջն նն կյանջով ու հույսով, Ու հույսերը համակ աղնիվ Լիջը բարով ու լուսով...

Տեսեջ, Թեև ծվենս-ծվենս Ծիրանի է իր հագին, Ու ցալում է իր հիպերենս Աղնվական իր հագին... Ամեն շարժում դեպի կյանջն է, Ամեն ձրգտում՝ դեպի վեր, Ալջերն էն կողմ, ուր ծաղկում են Ընտիր աղգերն ու ցեղեր...

----

#### ԴԺՈԽՔԻ ՀԱՆԴԵՊ

Հո՞ւշ, հասավ օրը վերջի՞ն, ահավո՞ր. Սրոով ու Հրրով բացվում են էսօր Հայոց դրժոխքի դրոներն ամրափակ. Սարսափի պիտի աշխարհբը համակ... Ո՞ւհ, ի՞նչթան մութն է, դարշահոտ ու պաղ... ինչքան ոսկորնե՞ր, կրմախքներ անթաղ... by how fundation Shuth fundament... I'd & hawand ... n'id wigh & gapait... Մեջաեղը մենակ, ժեռուտ բարձունըին, Հողմերի առջև կանգնած է մի կին. Որդու արյունը իր ձևռըն են տրվել. - Խըմի՛ր սուլթանի կենացը դու էլ... Եվ Նա, որ մարդ էր ու մայր էր երեկ, Այժըմ, էն ժայռիչ կանդնած կիսամերկ, Անուժ ու ապուջ խելադար է մի, Բաժակը ձեռջին, որ պիտի խրմի... Կանդնուծ է մենոսկ, և լոկ մոլեդին Հողմերն են ոռնում ու նըրանը չորս դին... Բայց՝ հո՞ւշ. լաությո՞ւն... մըթին, ահավոր Երկինը են նայում կըմախքները չոր, Ու իրենց կարկամ շըրթունքները բաց՝ Խոսը են ասելու աշխարհըի դիմաց, Խո՞սք, որ շի լըսված դեռևս լուսնի տակ... Սարսափի պիտի աշխարհ բովանդակ...

#### <u> ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ</u>

Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքովը հին՝ Վերջին հանդիստը կարդամ իմ ազգի անբախտ զոհերին, Որ չեն ու քաղաք, որ սար ու հովիտ, ծովից մինչև ծով Մարած են, մեռած, փըռված ու ցրրված հաղար հաղարով...

Ու կըրակ առա Հայոց Հրդեհի կարմիր բոցերից, Էն խաղաղ ու պաղ երկնբի ծոցում վառեցի նորից Մասիսն ու Արան, Սիփանն ու Սըրմանց, Նեմրութ, Թանգուրեք, Հայոց աշխարհի մեծ կերոնները վառեցի մեկ-մեկ, Սուրը Արադածի կանթեղն էլ, ինչպես հեռավոր արև, Անհաս, աննըվաղ, միշտ վառ ու պայծառ, իմ գրլխի վերև...

Կանդնեց խոժոռ, մենակ ու Հաստատ, Մասիսի նըման, Կանչեցի Թըչվառ էն հոգիներին՝ ցրրված հավիտյան Մինչև Միջագետթ, մինչև Ասսրիթ, մինչև Ծովն Հայոց, Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալևկոծ։ — Հանգե՞բ, իմ որբե՞ր... իզո՞ւր են հուզմունք, իզո՞ւր . և անչահ...

Մարդակեր գաղան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կը մնա...

Աջիցըս Եփրատ, ձախիցըս Տիգրիս՝ ահեղ ձեներով, Սաղմտս կարդալով՝ անցան, գընացին խոր-խոր ձորերով, Ամպերն էլ նլան Չիրավի ձորից, հըսկա բուրվառից, Ճանապարհ ընկան Ծաղկանց սարերից, Հայկական պարից,

Апւյլ-րույլ, բուրավետ, շարժվեցին դեպի կողմերը հեռու, Գոհար ցողելու, ծաղկունը բուրելու, բուրմունը խընկելու Մինչև Միջաղետը, մինչև Ասորիը, մինչև Ծովն Հայոց, Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ... – Հանդե՞ը, իմ որբե՞ր... իզո՞ւր են հուզմունը, իղո՞ւր և անշահ... Մարդակեր գաղան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կը մնա...

### ԻՄ ԱՐՈՒՍՑԱԿԻՆ

Լուսապըսակ Իմ Արուսյակ, Ի՞նչ գեղատես Ու ի՞նչ զրվարք Վառվըռում ես Իմ աստղաղարդ, Պայծառ ու պերճ Գիշերվա մեջ...

Usin', Øbb Ձեղավ արև Էս պաղ կյանքում Ու երկնքում, Բայց բյուր արեգ Ու բյուր ցերնկ Միշտ արժեր Էսքան շըքե՛ղ, Հըրաշադե՛ղ, Մի դիշեր...

#### ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՉ

(ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ)

Ρωράμπύի պետեղերջին նրատել էին նրանջ պերի, Հիշում էին իրենց Սիոնն, նրուսադեմն ու լալիս, Կախել էին տավիղները վեր՝ Ճյուղերին ծառերի, Հիշում էին անցած փառջևրն, անցած երպերն ու լալիս – Առե՛ջ տավիղն, երպե՛ջ, տեսնենջ նրգերը ձեր Սիոնի. Ասում էին գերիչները Իսրայելի որբերին, Ու՝ սըրրելով նըրանջ լացը իրենց տխուր ալջերի՝ Տավիղն առած երպում էին օտար պետի ափերին։ - Λ' ψυμηρωψωύ δηπιωνηδά, μυψήτης ύδη δητορή,
 δή εία, θητώ, άδη αρκαιβητώ, βί δαπωύωνο άδυε δημέε,
 βαη δαπωύω άδη δίδη δωψήσιων ας δύνως δίδο τρημε,
 βαη ζαπούω άδη δίδη δωψήσιων ας δύνματηβητί և ας έρτ...
 - Λ' ψ ωνορόν τοι Ρωμείνο, δρύδψ μωψήδυ πρωπαι,
 Αρ ματιμή ωχερη ωπως ημιψύδημη εωρόρη,
 δητιβητίς μαι βραφικάς του ματιμάτες
 Αρμαμημή ωχερη ωπως ημιψώδημη εμιθηδη,
 δητιβητιβητιβητίς
 δητιβητιβητιβητίς
 Αρμαμημή ωχερη μητιβητίς
 Αρμαμημή ματιμάτες
 Αρμαμημή ματιμήδο δαιδημάτες
 Αρματιβητίς
 Αρματιβητίς

#### ՎԲԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԲ

(2በԴՎԱԾԻ ՓՌԽԱՐԵՆ)

Երբ խոսում են Վըրաստանի Թըշնա<mark>մանջից արյունոտ,</mark> Զարմանք է ինձ պատում Հայտնի, Եվ խորին ցավ, և ամոնե

Ո՞չ ապաքեն գիտեն նրրա Ոսոիսները մինչ անդամ, Աղ ու հացն է սիրել միշտ նա, Միջտ աշխարհրին բարեկամ։

Թեև պատած Հաղար վերքով՝ Շատ ցավեր է նա տարել, Բայց խաչակիր իրեն ձեռքով Գեռ ոճիր չի կատարել։

Եվ իր ձեռջը եթե Համառ Տարածում է Հին վրկան, Ոչ թե դաժան գործի համար, Այլ դեպ պայծառ ապագան։

Եվ ի՞նչպես չեն տեսնում ոմանք Նըրա ընթհացքն աննըկուն, Ո՞նց են ասում. իր բախտի տակ Նա ընկել է անկանգուն։

Ո՞լ ապաքեն Կովկասն անսաստ Պատ է կանգնած մինլ երկին, Որ լրՀագթի բութը նրրան, Ինլջան սուրա մոլեգին։

Π΄ μυμωρέδ Φπίσπους ζως Շστύς է ζαυστό ζαιί στ. ητί, Πε ύω ζωίζου Τρύω ημιως, Ισπρομίδερης μυμωζαί:

Եվ չե՞ն լրսել դեռ վրրացու Երգը զրվարք ու անհոգ, Ո՛նց է ծաղրում նա մահացու Ամեն հարված անողոք։

Երբ խոսում են իր անկումից, Թըչնամանքից արյունոտ, Զարմանք է ինձ պատում անվերջ, Եվ խորին ցավ, և ամոթ։

Երաղեցի շարունակ Իմ կլանջի մեջ ես ժանկուց, Ու մընացի միշտ մենակ Պատրանթի մեջ՝ Ես մանկուց։

υα ζραμπου πι στάμμο υρωηύτρημη μα ζρομη, υξ πι σημ σωρη, πι σημ μμυ Ζάρπουύτρη μα ζρομη

Ծրաղեցի շարունակ Իմ կյանքի մեջ ես մանկուց, Ու մընացի միշտ մենակ՝ Պատրանքի մեջ՝ ես մանկուց։

#### ԴՈՒ ՉԳԻՏԵ՞Ս...

Դու չըգիտե՞ս՝ Խնչու եմ ես Անբուժելի Տրխուր էսպես։

— Ինչ ունեի լավ ու պայծառ՝ Ընկա՞ն, հանգա՞ն մի-մի, մի-մի. Օրորանս էլ՝ միակ, որ կար, Արնոտ հղավ ու թրշնամի...

Դու չըգիտե՞ս՝ Ինչու եմ ձեզ Քընարիս հետ Գըրկել էսպես...

-- Մρβύնց Հոգուս երկինջն անՀուն, Սիրտըս պատեց ժեծ շափառուկ. Մեռա՞ն, կորա՞ն շուրջս ու Հեռուն, Քընարս է լոկ մնացել... և դուջ...

### ՊԱՏՐԱՆՔ

Վեր է կացիլ էն սարում Մեր Չալակը իր Թևից. Գընում է մութ անտառում, Քաջ ախպերըս ետևից,

Զրընդում են նըրանք խոր էն անտառում կուսական, Ես կանչում եմ նորից նոր, Ինձ Թրվում է, Թե՝ կրդան...

Ջո՜ւթ... վա՜ղուց են, ա՛խ, նըրանջ Մեր սարերից գրնացել. Էն զիլ ձեներն են մենակ Իմ ականջում մընացել...

#### ՎՐԱՍՏԱՆԻ ՈԳԻՆ

Խունկի բության մըջուշներում, Մըրմունջներով պատած երգի՝ Կանգնած է նա կապույտ հեռվում՝ Վարդը կյանջի, հարսն երկընջի, Եվ չըդիտեմ՝ աղո՞նջ անեմ, Թե՞ րդմայլվեմ իր գեղի դեմ։

Համակ շընտրեր ու սըրբություն, Նայում է լուռ՝ լուռ սըրտիս մեջ, Լույս Հայացրի խորքում անհոմ։ Վառված սիրո կըրակն անջևջ... Եվ ո՞վ կասի՝ կըրա՞կն է շատ, Թե՞ սըրբունյունն իր անարատ։

Խալ է բրոնած իր կույս ձեռին, Որ նրման չի ոչ մի խաչի, Ու վարդն, ասես, աստվածային, Պիտի շրնչի ու կանաչի. Մի նրշանում կապված հանդարտ՝ Տանջանբը վեհ, կյանբը գրվարն.

**Γ**αιθή θόθα φαι է ήγδι Φωιδωππιθμωύύ ής δυζωύχδι, Վζατή ωδαμήη ιαιμά δωδωύχδι, ζαιμό ευφαιιδι (ζωαιδώ ής Κήδ. Δι ζωρήφύ ζι, ωυόυ, ωύζως, Δαμη է ηωράδι ής ήτω δωδωσι

Ա՜խ, առնհի եղբոր ձևռով Բախտի ձրգած քողը տրրտում, Որ նա Տառնհր իր ողջ գեղով, Ապրհր անփույն էն Հոխ Տովտում, Վերին Պոետն ուր որ նըրան Կերտեց, գարձավ ապշեց վըրան։

#### ኮሆ ԵՐԳԸ

Գանձեր ունեմ անտա՞կ, անծե՞ր, Ես հարուստ եմ, ջա՞ն, ես հարուստ, Սով բարություն, շընորհը ու սեր Ճոխ պարդև եմ առել վերուստ։

Անհուն հանջը ին դանձերի, Սիրտս է առատ, լեն ու ազատ. Ինչքան էլ որ բաշխեմ ձըրի՝ Սերն անվերը է, բարին՝ անհատ

Երկյուղ չունեմ, ահ չունեմ հա Գողից, չարից, չար փորձանչից, Աշխարհրով մին՝ ահա էսպես Շաղ եմ ատլիս իմ բարձոմնջից։

նս Հարուստ եմ, ես բախտավոր Իմ ծրճընդյան պայծառ օրեն, Էլ աշխարհ չեմ գալու հո նոր, Իր արվածն եմ տալիս իրեն։

### ՆՎԵՐ

### ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻՆ

Չէ՝ չի լրոել մեծ Շոխայի Երդի ձևնը կաթողին Ու դարավոր ցավն ամեհի Չի խորտակել էն Տոգինո

Թընպում է դեռ նոր ծեռջերում Էն ընտրը գովանի, Խընդում է դեռ նոր երդերում Վըրտստանը դեղանի։

— Ողջո՞ւյն, ողջո՞ւյն ձևղ հին ու նոր Արի, բարի ընկերներ, Արարատի կողմից էսօր՝ Եղբալրական երգ ու սեր։

Հին օրերի վերջալուսին, Արշալուսին նոր կյանքի Որգենք սըրտանց ու միասին Երգր Հանուր բերկրանքի։

Բարձըը Չընչի մեր նրգը Թող, Չարի ձենը խըլացնի, Հընչյուններովն իր կախարդող Երկրե հրկիր Թող անցնի։ Ամեն կողմից թեող ամենին Հըրապուրի ու բերի Բազմալեզու խըրախճանին Ծեր Կովկասի ազգերի,

Ելնե՞նք՝ տեսով ու Հանաչով, Ընկեր, ախպեր, մեր ու քուր՝ Մեր բյամանչով, ուրախ կանչով Գընանք դեպ կյանքն ընդհանութ։

Շատ, շատ արցունը Թափվեց մեզնում, Մեն մի կաԹիխ՝ մի խըրատ, Անլուռ, անդուլ էն է ասում՝ Ճամփա չունի գործը վատ։

Թող` ով կուզի՝ երկար-րարակ, Ջոռ տա խելջին մինչև մահ, Մենք իմաստուն՝ սիրենք, խնդանք, Կյանջը էս է, ինչ որ կտո

Զարկե՛ք ուժգին մեծ Շոթայի էն բընարը ոսկելար,— Մարդը ինչ տա՝ էն կը շահի, Թող իմանա ողջ աշխարհ.

Shulp φωնի նոր Δέδη ξ Խոսում մուսան էս երկրում, Պատգամներով պայծառ ու վեհ, Հաղար ու մի երգերում։

Ողջո՞ւյն, ողջո՞ւյն ձեղ հին ու նոբ Արի, բարի ընկերներ, Արարատի կողմից էսօր՝ Եղբայրական երգ ու սեր։

## **ՍԻՐԻՈՒՍԻ ՀՐԱԺԵՇՏԸ**

Սիրիո՛ւս, նրկնից ահեղ անցվոր, Ո՞ւրկից նկել, Ո՞ւր ես Թեջիլ, Ո՞ւր ես Հեպում էզքան հրղոր, Անճառ Թափով, Անծեր ճամփով, Դարե՞ր, դարե՞ր հաղարավոր։

Սիրիո՛ւս, հրկնից շըջեղ գոՏար, Որ խաղում ես, Փազփաղում ես Ճերմակ ու բիլ լուսով քո վառ Ու ղարդարում, Զըվարթ վառում Մեր դիշերվան Ճակատը մառ՝

Ի՞նչթան աչբ հն վրրադ հառել, Ծայում են բեղ Հիմա մեղ պես, Ի՞նչբան աչբ է ճայիլ, մարել, Եվ կամ ի՞նչբան Դեռ պիտի դան, Որ անհայտից կյանը չեն առել։

Ո՞վ առաջինն ասավ ողջերն Քեղ մեր հողից, Մարդու ցեղից, **Կամ ո՞ւմ աչքում պիտի անհետ** Մի որ հատնի, Մարի, մըքնի Հրթաժեշտի շողըդ հավետ...

Բորի ճամփա՛, Տյո՛ւրըդ մեր հին․ Եվ իե տեսնես՝ Մեղնից էսպես Մի հարցում սուր հըզոր մահին․ – Մարդու քանի՞ Սերունդ կանի Մի հըրաժեշտն աստեղային։





2nds. Pridwhjub, S. 1-10



¥ ± Ա՜նց՝ կացա՞ն... Օրհրս Թըռան, ա՛նց կացա՞ն. Ախ ու վախով, դաթդերով Սիրտըս կերա՞ն, ա՛նց կացա՞ն.

«Հառաչանք»-ից

Վերջացա՜վ... Կյանքըս մաշվեց, վերջացա՜վ. Ինչ հույս արի՝ փուչ ելավ, Ինչ խընդություն՝ վերջը ցա՜վ։ «Հառաչանք»-ից

չ....≁ Ո՞ւր կորան... Մոտիկներըս ո՞ւր կորան, Ինչքան լացի, ձեն աձի՝ Չեն չի տըվին, լո՞ւռ կօրան։

σίεκ h'm չնկավ... Գրնա'ց, գրնա'ց, bm չնկավ, Անկուշտ մահին, ok հողին Գերի մընաց, կ'տ չնկավ։

Հեմ Հիմի բացե՞լ են հանդես Երգիչները իմ անտես, Ջա՞ն, հայրենի՝ ծըղրիդներ, Ո՞վ է արդյոք լըսում ձեզ։

Und է ին վիշտն, անափ ու խոր, Լիջն ակունքով հաղարավոր. Ին դայրույթը լիջն է սիրով, Ին դիշերը՝ լիջն աստղերով,

Քանի՞ մած կա իմ օրրտում, Թափուր գած կա իմ օրրտում, Չէ՞ դու էլ ես մածացու. Մածի ած կա իմ օրրտում։

### JJ.

Ο΄ια δίμδ"φι.. Գարնան վարար գետ δίμδ"φ, Անդյա՞ծ օրեր, խի՞նդ ու սե՞ր, Դարձե՞φ, իրար Տետ ճկե՞φι

#### 2755

2 2/10 ω2/υωρς ερ ωθέδι ορ 2ω ηωρ θωρη է θρωδιατό δαρ, 2ω ηωρ καυρίζω ψαράδι αι ηπρό Ωυμρυίστι τ ωθόδι ορι.

> « / Τ Ո՞վ իմամա՝ ո՞ւր ընկանը, Քանի՞ օրվա հյուր ընկանը, Սերն ու սիբտն էլ երբ չըկա՝ Կըրա՞կ ընկանը, զո՞ւր ընկանը։

1.13 Նրաղումըս մի մարի Մոտըս եկավ հարցմունքի. - Աստված պահի թո որդին, Ո՞նց էր համը իմ ձագի...

لَّهُ مَعْدَ 1.15 مَنْ اللَّهُ اللَ 2.15 مَنْ اللَّهُ اللَ 2.15 مَنْ اللَّهُ اللَ 2.15 مَنْ اللَّهُ اللَّ

K & X

Բանի՝ ձևոջից եմ վառվել, Վառվել ու Հուր եմ դառել, Հուր եմ դառել՝ լույս տըվել, Լույս տալով եմ ըսպառվել։

Մընացել է ընրդը մնզ, Հաղթանակի երթը մեզ. Անց են կացել՝ ով կային, Հիմի կըգա Տնրթը մեզ։

### $1 \ 9 \ 1 \ 8$

Π΄ δη է σημιοπιδ μο Κπαμία Չարին, բարուն,— ամենջին. Լույս է σουլμα σην կյանջիս Ու էն ճամփիս անմեկին։

Ρ΄ Έι δα βραιατό, μα-ηα αμ΄ μα, Ζωημη κωύμ δωά, αμ΄ μω, Ένα «Ένη ζωνδάλ ζωημη σόη Ράη τηλα βωήμαη, βάβα, αμ΄ μω:

Դեմ սո՞ւթ, արթեռւն ականջում Մի խոր ձեն է միջտ Տրնչում, ԱնՏո՞ւն, անքո՞ւն կարոտով Իրեն մոտ է ինձ կանչում։

ς 【ինե՞ր Հեռու մի անկյուն, 【ինե՞ր մանկան արդար ջուն, Երասլի մեջ երջանիկ, Հաշտ ու խաղաղ մարդկություն։

41

⇒յյ Մի հավը սարկի ես մի օր. Թրռա՞վ, զընաց վիրավոր։ Թրոչում է միշտ իմ մրաքում Թևր արնոտ ու մոլոր։ «Ժծ ԳԵրկու շիրիմ իրար կից, -)՝Հավերժական լուռ դրրկից, Դ Բախծում են պաղ ու խորհում Թե՝ ի՞նչ տարան աշխարհբից։

9 Աչնած ամպին ու ղամպին, Մոլոր նըստած իր ճամփին, Լոռու հանդում՝ մի արտուտ Նայում է դեռ իմ ճամփին։

Կըլթացնում են, արտորում Արտուտները արտերում, Թըոչում մանուկ Տոգուս Հետ, Ճալսրում, ճըխում եթերում։

5 Բերանն արնոտ Մարդակերը էն անբան Հազար դարում Տազիվ դառավ Մարդասպան. Չեռբերն արնոտ գնում է նա գեռ կամկար, Ու Տեռու է մինչև Մարդը իր Ճամփան.

Մեռա՞ն, մեռա՞ն... Եվ ահա, wanted by the youte an sus. Չեմ հասկանում աշխարհրի «Կան ու չըկան» ես հիմայ

Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն, Հերիաթական պալատներում ըսպասում են իմ հողուն. Ինչ եմ շինում էս ցեխերում, աղմուկի մեջ վայրենի... Ա՜խ, Թե նորից գլումնեմ Տանփան դեպի էնտ`ե` զ, դեպի տուն...

Մի-J Աղատ օրը, աղատ սերը, ամեն բարիք իր ձեռքին, Տանջում, տանջվում, որոնում է ու դրժբախտ է նա կըրկին. է՞լ անխելը մարդ, ե՞րբ տի թողնես ապրողն ապրի սըրտալի, Ե'րը տի ապրես ու վայնլես էս աշխարհըը շեն ու լի։

### لالريه

Հե՞յ աղած մարդ, ծե՞յ անդոծ մարդ, միտքըդ երկար, կյանքըդ կարճ, Քանի" քանիմն անցան բեղ պես, բեղնից առաջ, ըս առաջ. ի՞նչ են տարել նըրանք կլանքից, թե ի՛նլ տանես դու քեղ հետ, Խաղաղ անցիր, ուրախ անցիր հրկու օրվան էս ճամփեգ։

Դու մի անհայտ Բանաստեղծ ես, չրտեսնըված մինլ էսօր. Առանց խոսքի հրդ ես թափում հայացքներով լուսավոր, Ես էլ, ասենը, զարմանալի Ընթերցող եմ բախտավոր, Ap hupped bit to brabpe tuput shew as tuput prope

Քուն Թե արԹուն՝ օրիս շատը երաղ եղավ, անցկացավ, Երազն էլ, նուրբ ու խուսափուկ, վրռաղ եղավ, անցկացավ. Վրռաղ անցան երաղ, մուրաղ, ու չըմասա ոչ մեկին, Կյանքըս ԹեԹև տանուլ տրված գրրաղ եղավ, անցկացավ։

### 0×1.1

Ո՞ր աշխարհրում ունեմ շատ բան. միաք եմ անում՝ է՞ս, թե էն. Մեջտեղ կանդնած՝ միաք եմ անում, չեմ իմանում՝ է՞ս, թե էն. Աստված ինչն էլ, տարակուսած, չի հասկանում ինչ անի. Տանի՜, թողնի՜,— ո՞րն է բարին,ո՞ր սահմանում, է՞ս թե էն։

Ի՞նլ իմանաս ըստեղծողի գաղտնիրները անմեկին.---Ընկեր տըվավ, իրար կապեց էս աշխարհրում ամենջին. Բանաստեղծին Թողոց մենակ, մե՞ն ու մենակ իրեն պես, Որ իրեն պես մրաիկ անի ամեն մեկին ու կյանթին։

Երնեկ էսպես՝ անվերջ թեզ հետ՝ իմ կյանթի հետ լիննի. Հազար Երնեկ՝ դաշտում մենակ՝ երկընջի հետ լիննի. Բայց ո՞վ կրտա էն վայելթը՝ ինջըս ինձ էլ չրվգայի, Ու հայվեի, ծավալվեի, ամենջի հետ լինեի...

Առատ, անհատ՝ աստծու նրման՝ միշտ տեղալուց հոդնել եմ ես. Հոգիս ծարավ՝ սրրան-նրրան մրտիկ տալուց հոդնել եմ ես. Մինը պիտի գար իմ դեմը՝ ճռխ ու շրռայլ անհաշիվ, Ամեն ճամփում ըսպասելուց ու փընտրելուց հոդնել եմ ես։

Ես շընչում եմ միշտ կենդանի աստծու շունչը ամենութ. Ես լըսում եմ նըրա անչուռ կանչն ու Տունչը ամենութ Վեհացնում է ու վերացնում ամենալութ իմ Տոդին Տիեղերջի խոր մեղեդին ու մըրմունջը ամենութ։

Արյունալի աղետներով, աղմուկներով ահարկու, Արևմուտքի ըստրուկները մեջենայի և ոսկու՝ Իրենց հոգու անապատից խուսափում են խուռներամ Դեպ Արևելջն աստվածային՝ հայրենիջը իմ հոգու...

Ամեն անգամ ջո տրվածից երբ մի բան ես դու տանքում, Ամեն անգամ, երբ նայում եմ, թե ի՞նչջան է դեռ մընում,— Հարմանում եմ, թե՝ ո՞վ շրռայլ, ի՞նչթան շատ ես տրվել ինչ Ի՞նչջան շատ եմ դեռ ջեզ տալու, որ միանանը մենջ նորիչ։

Ասի. «Հենց լոկ էս աճյունն է ու անունը, որ ունեմ»… Երբ ճառադեց անծայրածիր ջո ժըպիտը հոգուս դեմ. —Ի՞նչ է աճյունն էդ անկայուն, ու անունը, որ ունես, Դու աստվա՞ծ ես, դու անհուն ես, անանուն, ես ու աներ տ Աստեղային երազների աշխարհըներում լուսակաթ, Մեծ խոհերի խոյանըների հեռուներում անարատ, Անհիշելի վերհուշերի մըշուշներում նըրբաղոտ՝ Երբեմն, ասես, ըզգում եմ ես, թե կըհասնեմ նըրա մոտ.

Քարձր է հընոց աշխարհըն հայոց ու Մասիսը երկնադետ. Իմ խոր հոդին էն բարձունքին խոսք է բացել նըրա հետ՝ Անհաս բանից, ըսկդրանից իրը չրկան էլ դեռ չրկար, Մինչև վախճանն անվախճանի ընընում է դարեդար։

- 3,0°վ անճառ մին, որ ամենին միացնում ես մի կյանքում, Ամեն կյանքում ու երակում անտես, անկեզ բորթոքում,— Ողջ ազատ են ու Հարազատ էս աշխարհրում քեղանով, Ողջը քո մեջ՝ անմա՞հ, անվերջ՝ քեղ են երդում քո ձենու
- 10 Կյանջըս արի հըրապարակ, ռաջի կոխան ամենջի. Խափան, խոպան ու անպըտուղ, անցավ առանց արդյունջ Ի՞նչջան ծաղիկ պիտի բուսներ, որ չըբուսավ էս հողին... Ի՞նչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տրվողին


Գալիս հն Հանդեսով ջաղացի դռանը կանգնում։ Ջաղացպանի բուրբը Հանում, թադավորի շորերը Հազցնում, նստեցնում են նժույդ ձիուն։ Շրջապատված մեծամեծներով, առջնից ձիավորներ, ետևից ձիավորներ — էսպես Հանդեսով բերում են թագավորի պալատը։ Իր օրումը պալատ չրաեսած ջաղացպա՞ն — շշկլված, բերանը բաց մին չորս կողմն է նայում, մին Հադի շորերին է նայում, խլշկատում ու ղարմանում։

— Էս ինչու չբտեսի նման դես ու դեն է նայում, աղվես ս.խպեր, — Հարցնում է Թագավորը։ — Կարծես առմա չոյինի տեսած, շոր չըլինի հագած։

— Ձէ, դրանից չի,— պատասիանում է աղվեսը։— Նայում է ու Համեմասում իր տւնեցածի հետ, իե իր ունեցածը որտե՞ղ, էս որտեղ...

Նսաում են ճաշի։ Տեսակ տեսակ կերակութներ են բեոում։ Ջաղայպանը չի իմանում՝ որին ձևռը տա կամ ինչպես ուտի։ - Ի՞նչու չի ուտում, աղվես ախպեր, - Հարցնում է Բաղավորը։

— Գալու ժամանակ ճամփին որ կողոպաեցին, նրա Չամար միտջ է անում։ Չեջ կարող երևակայել, տեր թագավոր, թե ինչքան բան տարան և վերջապես ինչ անպատվություն էր էդ մեր թագավորի համար։ Ի՞նչպես հաց ուտի,— պատասխանում է աղվեսը հառաչելով։

— Բան չըկա, ղարդ մի անի, սիրելի փեսա, աշխարհը է, էդպես էլ կըպատահի,— խնդրոտք է խաղավորը։— Այժմ հարսանիք է, ուրախանանք, քեֆ անենք։

Ու բեֆ ևն անում, ուտում, խմում, ածում. պար գալի. յոնն օր, յոն գիշեր Հարսանիք անում։ Աղվեսն էլ դառնում է քավոր։

Հարսանիքից հնտո Թագավորը իր աղջկանը մեծ բաժինք է տալի ու հանդհսով ճամփա դնում՝ Չախլախ՝ Թագավորի հետ։

— Կացե՛ք, ես առաջ գնամ տունը պատրաստեմ, դութ իմ ետևից եկեք, ասում է ջավոր աղվեսը ու վազ տալի։

Վազ է տալի վաղ, տեսնում է մի դաշտում մեծ նաիդիր է արածում,

- էս ո՞ւմ նախիրն է։

Band by. - Jus-Wappbp

— Պա, Շան-Մարի անունը էլ չրաագ, որ թագավորը նրա վրա բարկացել է, վորջով իմ հաևից դալիս է. ով նրա անունը ավավ՝ դլուվսը կարել կրտաս։ Որ հարցնի թե ումն է, ասևջ, Չախչախ թագավորինը, թե չէ՝ վայն եկել է ձևղ տարել։

Վաղ է տալի վաղ, տեսնում է ոլիսարի հոտը սարերը բոճսել էւ

-- էս ո՞ւմն է, -- Շահ-Մարինը, Հովիվներին էլ նույնն է ասում, Վազ է տալի վաղ, տեսնում է ընդարձակ արտեր, հընձվորները միջին հնձում են, -- էս ո՞ւմ արտերն են, Շահ-Մարինը։
Հնձվորներին էլ նույնն է պատվիրում։
Վաղ է տալի վաղ, տեսնում է անվերջ խոտհարըներ։
— էս ո՞ւմն են։
— Շահ-Մարինը։
Խոտ հարողներին էլ նույնն է ասում։
Հասնում է Շահ-Մարի պալատին։
— Շահ-Մար, ա Շահ-Մա՛ր, – գուտում է հեռվից վասելով։ Քու տունը չրջանդվի, միամիտ նստել ես։ Բագա վորը բեղ վրա բարկացել է, մեծ պօրթով գալիս է, որ բեղ սպանի, տուն ու տեղղ ջանդի, տակն ու վրա անի, ունեցածչունեցածդ էլ Թագավորական գրի։ Մի անգամ ջեղ մոտ մի վառիկ եմ կերել. էն աղուհայը դեռ չեմ մոռացել։ Վաղեցի, եկա, որ բեղ իմացնեմ։ Շուտ արա, գլխիդ ճարը տես, ջանի չի եկել։

— Ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ, – Տարցնում է սարսափած Շահ-Մարը ու տեսնում է, որ ճշմարիա, հեռվից փոշի րարձրացնելով գալիս է Թազավորը։

— Փախի՛, շուսով ձի նստի փախի, էս երկրից կօրի, էլ ետ չընայես։

Շահ-Մարը իսկույն նստում է իր լավ ձին ու փախչում էդ երկրից։

Աղվեսի ետևից գալիս են Հարսանքավորները։ Գալիս են պուռնով, ինբուկով, երդով, պորբով Հրացան արձակելով ու աղմուկով։

Գալիս են Չաիւչախ խագավորն ու իր կինը ոսկեղոծ կառջի մեջ, նրանց առջևից ու ետևից անհամար ձիավորներ։

Հասառում են մի դաշտի։ Տեսնում են մեծ նախիր է արաժում։

- էս ո՞ւմ նախիրն է, - Հարցնում են ձիավորները։

— Չախչախ Թադավորինը,— պատասխանում են նախրապանները։

Անց են կենտում։ Հասնում են սարերին։ Տեսնում են ոչխարի սիպտակ հոտը սարերը բռնել է։

- Էս ո՞ւմն է,- Հարցնում են ծիավորները։

Չախչախ թագավորինը,— պատասխանում են Տովիվները։

Անց են կենտում։ Հասնում են ընդարձակ արտերի։ — էս ո՞սք արտերն են։ — Չախչախ Թագավորինը։ Հասնում են կոստնարջներին։ — էս ո՞ւմն են։

Չախչախ իաղավորինը։

Ամենբը մնացել են դարմացած, Չախչախ թաղավորն ինթն էլ թիչ է մնում խելթը թոցնիւ

էսպեսով Աղվեսի հուևից դալիս են, Հատնում ՇաՀ-Մորի պալատներին։

Քավոր աղվեսն էնտեղ արդեն տեր է դառել, կարդադրություններ է անում։ Ընդունում է խնամիներին - նորից օկսում են ըեֆը։

Յոքի օր, թոք գիշեր էլ էստեղ են թեֆ անում – խնամիները վերադառնում են իրենց տեղը։

Չախչախ Թադավորը, իր կինն ու ջավոր Աղվեսը ապրում են Շած.Մարի պայատներում։

Իսկ Ոադավորից վախեցած ՇաՀ-Մարը մինչև էսօր էլ դեռ դնում է։

## 1908

### ՈՍԿՈՒ ԿԱՐԱՍԸ

ου δωμ δέμεμης έν μυση, δερ δέρεης ηρείος պատգերից, Έρωνη պատգերն էլ իրենց մեծներից, βե մի ժամանակ մի աղբատ Տաղագործ է լինում, ունենում է մի օրավար հաղ ու մի լուծ եղթ։

Չմեսը էս աղջատ Հողադործի եղները ստակում են։ Գարունջը, վար ցանջի ժամանակը որ դալիս է, եղը չի ունենում Ձե վարի, ժողը վարձով տալիս է իր Յարևանին։

էս Հարևանը վարելու ժամանակ խոփը մի տեղ դեմ է ընկնում, զուրս է դալի մի կարտո, մեջը լիթը ոսկի։ Եղները լծած Թողնում է, վաղում է գյուղը Հողատիրոջ մոտո

— Հեյ, աչթգ լուս,— ասում է,— բու հողումը մի կարաս ոսկի գուրս եկավ, արի տարո

— Չէ', ախպե՛ր, էդ իմը չի,— պատասխունում է Հողատերը։— Հողի վարձը գու ուվել եռ, դու վարում ես, էն Հողումն ինչ էլ գուրս դա, ըստնն է, ուկի է դուրս եկել, թող օսկի լինի, էլի բունն է։

Սկսում են վիճել. օու ում է՝ բոման է, նա, նե չէ՝ բունը։ Վեճը տաջանում է, իրար ծեծում ենո Գնում են նադավորի մոտ դանդատ։

Թաղավորը մի կարաս ոսկու անունը լսում է Թև չէ՝ աչբերը չորս է բաց անում։ Ասում է.

– Ոչ բունն է, ոչ դրանը, իմ Տողումը կարասով ոսկի է դուրս եկել – իմն է։ Իր մարդկանցով գնում է, որ Տանի բերի։ Գնում է կարասի բերանը բաց անել է տալի, տեսնում – ի՞նչ ոսկի – կարասը լիջը օձ...

Ջարհուրած ու կատաղած նա է դալի։ Հրամաբում է պատժեն անգնտ ռանչպարներին, որ համարձակվել են իրեն խարել։

-- Չէ՞, թաղավորն ապրած կենա, — դոռում են խեղճերը, — մեզ ինչո՞ւ ես սպանում. լավ չես տեսել, օձ չրկա էն. տեղ, ոսկի է, ոսկի...

Թագավորը նոր մարդիկ է ուղարկում, որ դնան ստուդեն։ Մարդիկը գնում են, ետ գալի, թե՝ ճշմարիտ, տսկի է – Վա՜հ,– ղարմանում է թագավորը։ Ասում է.– երևի լավ չրահոտ, կամ տեսածս էն կարասը չէր։ Վեր է կենտա մին էլ գնում։

կարասը բաց է անում, – դարձյալ մեջը լիքը օձ։

էս ի՛նը Հրաշը է, ի՞նը միտը ունի, – չեն հասկանում։

Թադավորը Հրամայում է, Հավաքում է իր երկրի իմասառւններին։

— Բացատրեցեջ,— ասում է,— ո՛վ իմաստուններ, ի՞նչ Տրաշջ է սա։ Էս Տողադործներն իրենց Տողում կարասով ոսկի են դտել։ Ես եմ դնում—կարասը լիջն օձ է գառնում, սրանը են գնում—ոսկի։ Էս ի՞նչ կրնշանակի։

— Դրա բացատրությունն էս է, թագավոր, ենե չես բարկանալ, — ասում են իմաստունները։ — Կարասով ոսկին աղչատ Տողագործներին պարզև է գրկած իրենց աղնվության ու արդար աշխատանթի համար։ Երբ ար ճրանք են զնում, իրենց արդար վարձին են գնում ու միշտ էլ ոսկի գտնում, իսկ երբ որ դու ես զնում, գնում ես ուրիշի բախտը հափըշտակես, ճրա համար էլ ոսկու տեղ օձ ես գտնում։

Թաղավորը ցնցվում է. խոսք չի գտնում պատասխանհլոււ

— Լա՛վ, —ատում է,— ղե Տիմի էն որոշեցեբ, թե էդ երկուսից ո՞րին է պատկանում գտած ոսկին։

— ԻՀարկե Տողատիրոջը, — Հայն է տալի վարող գյուդային։ — Չէ, վարողինն է,— մեջ է մտնում հողատերը։ Ու Նորից սկսում են կովել։

— Լա՛վ, լա՛վ, կացե՛ք,— կանդնեցնում են իմաստունները,— ի՞նչ ունեք դուս — աղա կամ աղջիկ։

Υπιρυ է գալի, πր մեկը մի տղա ունի, մյուսը մի աղջիկ։ Իմաստունները վճռում են, որ սրանք գնան իրենց աղջիկն ու աղեն իրար հետ պսակեն, էն պտած ոսկին էլ տան նրանց Էստեղ համաձայնում են բարի մարդիկը, ուրախանում են, ու կռիվը վերջանում է, սկսում է հարսանիքը։ Օխտն օր, օխտը գիշեր հարսանիք են անում, կարասով ոսկին էլ, որ պարզև էր զրկած իրենց աղնվության ու արգար աշխատան բի համար, տալիս են իրենց ղավակներինս

Բարին էստեղ, չայն էն ապահ թաղավորի մոտ։

### ՏԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՆ

Աստված բարի տա ձևղ էլ, երկու տիսպորն էլ, էինում են, չեն լինում երկու աղջատ տիսպեր են լինում։ Մտածում են ինչ անեն, ոնց անեն, որ իրենց տունը պաշենս։ Վշռում են՝ փորրը տանը մնա, մեծը դնա մի ունևտրի ծառա մտնի, ռո-Հիկ ստանա, դրկի տուն։

էսպես էլ մեծը վեր է կենում դնում մի Հարուստի մու ծառա մտնում։

Ժամանակ նշանակում են մինչև մին էլ կըկվի ձեն ածելը։ Էս Հարուստը մի չըլսված պայման է դնում ծառույին։ Ասում է՝ «մինչև էն ժամանակը Թե դու բարկանաս--ղու զար մանենի առւզունը տաս ինձ, նե ես բարկանամ ես տամջո

— Ես որ Հայլար մանեխ չունեմ ո՞րտեղից տամ, ասում է ծառան։

— Բան չրկա, փոիւարենը ինձ տասը տարի ձրի կըծա ռայես։

Տղեն մին վախենում է էս տարօրինակ պայմանից, մին էլ մտածում է, Թե ինչ պետք է պատահիւ Ինչ ուղում են անեն, ես եմ ու չեմ բարկանալ, պրծանը դնաց։ Իսկ Թե իրենը կըբարկանան, Թող իրենը էլ տուժեն իրենց դրած պայմանով։

Ասում է լավ. Տամաձայնում է։ Պայմանը կապում են ու մտնում ծառայության։ Մյուս օրը վաղ տերը վեր է կացնում ծառային դրկում է արտը Հնձելու։

— Գնա',— ասում է,— քանի լուս լուս է Հնձի, որ Կութն ընկնի կրդաս։

Ծառան դնում է ամբողջ օրը հնձում, իրիկունը հոգհած դալիս է տուն, Տերը հարցնում է.

- էդ ո՞ւր եկար։

— Դե արևը մեր մտավ, ես էլ եկա։

— Չէ՛, էդպես չիւ Ես թեպ ասել եմ՝ քանի լուս է, պետբ Է՝ հնձես։ Արևը մեր մտավ, բայց տես, նրա տիպեր լուս-Եյակը դուրս եկավ։ Սա ինչ պակաս է լուս տալի...

— էդ ո՞նց կրլինի...— զարմանում է ծառանո

— Հը", դու արդեն բարկանո՞ւմ ես, — հարցնում է տերը։ — Չէ՛ չեմ բարկանում... ես միայն ասում էի՝ հոգնած եմ... Մի թիչ հանդստանամ... կրզկրզում է վախեցած ծառան ու գնում է նորից հնձևլու։

Հնձում է, Տնձում, մինչև լուսնյակը մեր է մտնում։ Բալդ լուսնյակը մեր է մտնում ին չէ, դարձյալ արեդակն է դուրո դալի։ Ծառան ուժասպառ արտում վեր է ընկնում։

— Վա՞յ, թու արտն էլ Տարամ ըլի, բու Տացն էլ, թու աված ռոնիկն էլ...— ոկսում է հայնոյել ծուսահատված։

— Հը՞, դու բարկանո՞ւմ ես,— կանգնում է գլխին հարուստը։ Երբ որ բարկանում ես, մեր պայմանը պայման է։ Էլ չասես Թե քեզ հետ առանց իրավունթի վարվեցին։

Ու պայմանի ուժով ստիպում է, ծաստն կամ հաղար մանեն տուղանը տա, կամ տառը տարի ծրի ծառայի։

Ծառան մնում է կրակի մեջ։ Հաղար մանեն չուներ, βե տար հոգին ակատ աներ, տասը տարի էլ էս տեսակ մարդու ծառայելն անկարելի բան էր։ Միտը է անում, միտը, վերջը հաղար մանենի պարտամուրհակ է տալիս հարուստին, դառն ու դատարկ վերադառնում տուն։

— Հ՛ը, ի՞նչ արիր,— Հարցնում է փոքր ախպերը։ Ու ՛մեծ ախպերը նստում է, դլուխն էկածը պատմում, ինչպես որ պատահել էր։ — Բան չկա,— ասում է փոթրը,— դարդ մի անի. դու տանը կաց, հիմի էլ ևս գնամ։

Վեր է կենում՝ հիմի էլ փոջը ախպիրն է գնում՝ ծառա մտնում է՛լ նույն հարուստի մոտ։

Հարուստը դարձյալ ժամանակը որոշում է մինչև գարնան կրկվի ձեն ածել, ու պայման է դնում, որ հեն ծառան բարկանա, Հաղար մանեն տուդանք տա կամ տասը տարի ձրի ծառայի, նե ինքը բարկանա, Հաղար մանեն տա ու էն օրից էլ ծառան աղատ է։

- Ձէ', էդ քիչ է, - Տակառակում է տղենւ - Թև զու բարկանաս, դու ինձ երկու հաղար մաճեն տաս, նե ես բարկանամ, ես քիդ երկու հաղար մանեն տամ կամ քսան տարի ձրի ծառայեմ։

— Լա՛վ, – ուրախանում է հարուստը։ Պայմանը կապում հն ու այժմ էլ փոքր ախպերն է մանում ծառայության։

Առավոտը լուսանում է, էս ծառան վեր չի կենում տեզիցը։ Տերը դուրս է գնում, տուն է գալի, էս ծառան դեռ բնած էւ

- U' j wyw, yk dtep hwy E', opp Swe ywnwdi

— Հը՝, բարկանո՞ւմ ես դու... գլուխը վեր է քաշում ծառանւ

– Ձէ՛, չեմ բարկանում,– վախեցած պատասխոռնում է տերը. միայն տոում եմ՝ պետք է արտը գնանք Հնձելու

— Հա, որ էդ ես ասում ոչինչ, կրդնանը, ինչ ես վռագում։

Վերջապես ծառան վեր է կենում, սկսում է արեխչները Հաղնել։ Տերը դուրս է գնում, ներս է գալի, սա դեռ արեխ-Ները Հաղմառմ է։

- Ա՛յ տղա, ղե շուտ արա, հադի է...

- Հ՛ը, հո լե՞ս բարկանում։

— Չէ՛, ո՞վ է բարկանում, ես միայն ուղում էի ասել՝ ուշանում ենը...

— Հա՛, էդ ուրիշ բան է. Թե չն՝ պայմանը պայման է։ Մինչև ծառան արհիսները Տագնում է, մինչև արտն են գնում, Տաշ է դառնում։ -- Էլ ինչ հնձևլու ժամանակ է, -- ասում է ծառան, -տեսնում ես ամենջն էլ ճաշտոն են, մենք էլ մեր ճաշն ուտենք՝ հետու

Նստում են, ճաշն ուտում։ Ճաշից հետո էլ ասում է՝ «Մշակ մարդիկ ենք, պետք է մի քիչ քնենք, հանդատանանը, Բե չէ՞»։ Գլուվսը կոխում է խոտերի մեջն ու քնում մինչև իրիկուն։

— Տո', վեր կաց է, մի՞նեց է', ուրիշները Հնձեցին, մեր արտը մնաց... Վա՜լ քու դեսը դրկողի վիզը կոտրի, վա՜յ քու կերածն էլ Հարամ ըլի, քու արածն էլ... էս ինչ կրակի մեջ ընկա...- սկսում է գոոգոռալ ՀուսաՀատված տերը։

– Հը՞, չըլինի՞ Թե բարկանում ես,– գլուխը վեր է քաշում ծառան։

— Ձէ՛, ո՞վ է բարկանում, ես էն էի ասում թե՝ մխնել Հ. տուն գնալու ժամանակն է։

— Հա՛, էդ ուրիշ բան է, դնանը, նե չէ Տո մեր պայմանը գիտես. վա՛լ նրա մեղջը, ով բարկացավ։

Գայիս են տուն։ Տեսնում են Հյուր է եկել։

Ծառային զրկում են թե՝ գնա ոչիսար մորթի։

- n°pgi

— Որը կըպատահիւ

Ծառան պետում է։ Մի թիչ հետո լուր են ընթում հարուսաին. Թե՝ հասի, որ թու ծառան ամբողջ հոտդ կոտորեց։ էս հարուսաը վազում է, անսնում է՝ ճիշտ որ, ինչ ոչիսար ունի, բոլորը ծառան մորԹել է։ Գլխին տալիս է, գոռում.

— Էս ի՞նչ ես արել, ա՛յ անաստված, թու տունը թանդվի. ինչ իմ տունը թանդեցիր...

— Դու ասիր՝ «ո՛ր ոչխարը պատահի՛, մորթի», ես էլ եկա, բոլորը պատահեցին բոլորը մորթոտեցի—ուրիշ ավել պակաս ի՞նչ եմ արել,— հանգիստ պատասխանում է ծառան,— բայց կարծեմ դու բարկանում ես...

— Չէ՛, րարկանում չեմ, միայն ափսոսս գալիս է, որ էսբան ապրանջո փչացավ...

— Լա՛վ, որ բարկանում չես, է՛լ կըծառայեն։

Հարուստը մտածում է ինչ անի, ոնց անի, որ էս ծա-

ռայիցն ազատվի։ Պայման է կապել մինչև մին էլ դարնան՝ կրկվի ձեն ածելը, այնինչ դեռ նոր են մահլ ձմեռը, դեռ ո՞րահղ են դարունն ու կրկուն...

Միաք է անում միաք, մի ճնար է մտածում։ Կնոջը տանում է անտառում մի ծառի վեր հանում ու պատվիլում, որ «կուկու» կանչիւ Խքը դալիս է ծառային տանում իե՝ արի գնանը անտասը որսիւ Հենց անտառն են մտնում իե չէ, կինը ծառի վրայից կանչում է— «կուկո՛ւ, կուկո՛ւ...»։

— ԸՀը՞, աչթդ լուս,— ասում է ծառային տերը. կըկուն կանչեց, ժամանակը լրացավ...

Տղեն գլխի է ընկնում տիրոչ խորամանկությունը։

- 2ξ', ատում է, ով է լսել, որ տարու էս հղանակին, ծմեռվա կիսի՝, կրկուն ձեն ածի, որ սա ձեն է ածում։ Ես պետւջ է էս կրկվին սպանեմ, սա ինչ կրկու է...

Ասում է ու շրացանը բաշում դեպի ծառը։ Տերը դոսալով ընկնում է առաջը.

— Վա՜յ չըդարկես, աստծու սիթուն... սև լինի ջու պաշ տածելու օրը, էս ինչ փորձանը էր, որ ես ընկա մեջը...

- Հ'ը, չթյինի՝ թե բարկանում ես...

— Հա', անսպեր, Տերիք էր. արի` ինչ առշղանը տարու եմ տամ, քեղանից աղատվեմ։ Իմ դրած պայմանն է—ես էլ պետք է տուժեմ։ Հիմի նոր եմ հասկանում էն հին խոսրը` Թե «մարդ ինչ անի, իրեն կանի»։

Էսպես Տարուստը իսելոքանում է, իսկ փոջը տիոպերը մեծ ախպոր տված պարութի Թուզիկ պատռում է, Տագար մանեն տուգանջն էլ առնում տւ վերադառնում առնո

### ԽԵԼՈՔՆ ՈՒ ՀԻՄԱՐԸ

Երկու ախարեր են լինում․ մինը խելոջ, մյուսը «իմար։ Խելոք ախարերը միշտ բանեցնում ու չարչարում է հիմարին։ Էնջան չարչարում է, որ հիմարը հուսահատվում է, մի օր էլ կանգնում է, Յե՝

— Ախագեր, էլ չեմ տողում բեզ Տետ կենամ, բաժանվում եմ, իմ բաժինը տուր, դնամ ջոկ ապրեմ։

— Լա՛վ,— ասում է իսկզգը.— էսօր էլ դու ապրանջը ջուրը տար, ես կերը տամ. երբ ջրից բերես, ս՛ր ապրանքը գոմը մտնի — ինձ, որը գուրսը մնա — քեզ։

ժամանակն էլ լինում է ծմեռա

Հիմարը համաձայնում է։ Ապրանդը ջուրն է տանում նա բնրում։ Չմեովա ցուրտ օ՞ր, մրսած անասունններ. հենց տար գոմի դուռն են հասնում ին չէ՝ իրար նաևից ներս են իափում։ Դուսնը մնում է մի հիվանդ բոսոա մողի դերաններին բոր անելիս։ էն է մնում հիմարին։

էս Հիմարը թոկը վիզն է կապում, իր մոզին տանում ծախելու։

— Ա' մոզի, արի, Հե՞յ, — կանչելով գնում է։ Մի Հին ավերակի մոտից անցնելիս էլ որ ձեն է տալի մոզի, արի, Հե՞յ... – ավերակի արձագանքը կրկնում է. – Հե՞յ... Հիմարը կանգնում է։ – Ինձ Տետ ես խոսում, Հա"

Հիմարը համաձայնում է ու մողին ծախված համարելով՝ ավերակի դուսնը կապում է, շրվշրվացնելով վերադառնում առմա

Մյուս օրը առավոտը վաղ վեր է կենում գնում փողնթն առնելու։ Դու մի՛ ասիլ՝ գիշերը գայլերը մոզին կերել են։ Գնում է տեսնում՝ ոսկորները գես ու գեն ցրված ավերակի առջև։

- 2n<sup>°</sup>, - ωυπεσ ξ, - σπρβh<sub>l</sub> bu μbpb<sub>l</sub>, ςω<sup>·</sup>, - 2ω<sup>•</sup>... - 2ωη ξ<sup>°</sup>ρ, βb <u>ε</u>ξι - 2ξ<sup>°</sup>:

Հիմարը էստեղ վախենում է, կարծում է ավերակի մըտսումը կա, որ իր փողը չրտա։

— էդ իմ բանը չի,— ասում է,— առել ես պրծել, ես իմ փողի տերն եմ, բեր իմ փողը—տաս մանեն գեղին ոսկի"...

- U4h ...

էս էլ որ լսում է հիմարը, թարկանում է, ձեռի փետը ետ է տանում, տուր Թե կըտաս, ավերակի խարխով պատերին։ Մին, երկու զարկում է. պատերից մի բանի քար են վեր ընկնում։ Դու մի ասիլ՝ հնուց էդ պատում գանձ է եղել պահած։ Քարերը որ վեր են ընկնում՝ ոսկին Թափում է հանկարծ առաջը՝ լցվում։

- Այ էդպես... բայց էսբանն ի՞նչ եմ անում. տաստ

մենենի ես պարտ—իմ տասը մանենի տուր, մնացածը քու փողն է, ընչի՞ս է պետք... Մի ոսկի է վերցնում, գալի տունս — Հը՞, մոզիդ ծախեցի՞ր,— ծիծաղելով հարցնում է խելոք ախպերը։

— Ծախնցի։ — Ո՞ւմ վրա։ — Ավերակի։ — Հետո, փող տվա՞վ։ — ԻՀարկե տվավ։ Դեռ չէր ուզում տա, ամա ձեռիս փետովը որ մի ջանի հասցրի, ինչ ուներ՝ առաջիս փռեց։ Իմ

տասը մանենը վեր կալա, մնացածն իրենն էր, հենց թողեցի Լնպես փոված։

Ասում է ու ոսկին հանում ցույց տալիս։

— էդ ո՞րտեղ է,— աչքերը չորս է անում խելոք ախ պերը։

— ξ'4, gaijy չեմ տալ, դու աչքածակ ես, էնքան կըհավաքես, շալակս կրտաս, որ մեջքս կրկոտրի։

Խելոբը երդվում է, որ մենակ ինջը կըշալակի, միայն Թև տեղը ցույց տա։

- Բեր, ասում է, - ձեռինդ էլ ինձ տուր, մնացածի տեղն էլ ցույց տուր, որ ես տեսնեմ տկլոր ես, քեղ համար նոր շորեր առնեմ։

Հիմարը նոր շորերի անումը որ լսում է՝ ձեռինն էլ է տալիս ախպորը, տանում է մնացածի տեղն էլ ցույց տալիւ Խելուը ոսկին հավարում է, բերում տուն, հարստանում, բայց ախպոր համար նոր շորեր լի առնում։

էս Տիմարը ասում է, ասում է, որ տեսնում է չի լինում, գնում է դատավորի մոտ գանգատ։

— Պարոն դատավոր, – ասում է, – ես մի մոզի ունեի տարա ավերակի վրա ծախեցի...

— Հերիք է, հերիք,— ընդհատում է դատավորը.— էս հիմարը ո՞րտեղից եկավ, ո՞նց Թե մոզին ավերակի վրա ծախեցի...— վրեն ծիծաղում է ու դուրս անում։ Գնում է ուրիշներին գանգատվում, նրանք էլ էն վրեն ծիծաղում։

Πι ասում են, մինչև էսօր էլ խեղճ հիմարը կիսամերկ ման է գալի, պատահողին գանգատվում, բալը ոչ ոք չի հավատում, ամենքն էլ ծիծաղում են վրեն, իսկ խելոր ախպերծ էլ ծիծաղում է ամենքի հետո

\_ · \_\_\_\_

## ԽՈՍՈՂ ՉՈՒԿԸ

#### 1

Լինում է, չի լինում մի աղքատ մարդ։ Էս աղքատ մարդը գնտան է դառնում մի ձկնորսի շալակտար։ Օրական մի քա-Նի ձուկն է աշխատում, տուն բերում, նրանով ապրում են ինքն ու կինը։

Մի անդամ էլ ձկնորսը մի սիրուն ձուկ է բռնում, տա լիս իր շալակտարին, որ պահի, ինջն էլ հա ջուրն է մրտնում, էս շալակտարը դետավին նստած՝ նայում է նայում էն սիրուն ձկանն ու միտք է անում.

— Տեր աստված, — ասում է, — սա էլ, որ ՛մեզ նման շունչ կենդանի է, դու ասա՝ սա՝ էլ մեզ նման ծնող ունի, ընկեր ունի, աշխարհրից բամ է հասկանում, ո<del>ւ</del>րախություն կամ ցավ է ղդում՝ թե չէ...

Հենց էս մաածելու ժամանակ ձուկը լեզու է առնում. — Լսի՛, — ասում է, — մարգ-ախալեր, Ընկերներիս հետ ես խաղում էի գետի ալիջների մեջ։ Ուրախունյումնից ինձ մոռացա ու անդղույշ ընկա ձկնորսի ուռկանը։ Հիժի, ով գիտի, իմ ծնողն ինձ որոնում է ու լաց է լինում, հիժի ընկերներս տխրել են։ Ես էլ, տեսնում հս, ինչպես եմ տանջվոտ. շունլս կտրում է ջրից դուրս։ Ուզում եմ էլ ետ գնամ ապրեմ ու խաղ անեմ նրանց հետ էն պաղ ու պարզ ջրերում։ Ընպես եմ ուղո՞ւմ, էնպես եմ ուղո՞ւմ... Եկ խեղճ արի, ազատ արտ ինձ, բա՛ց խող, բա՛ց խող դնամ... երակես էր ասում ցա՞ծ, շատ ցա՞ծ ձենով, ցամաջած բերանը բաց ու խումի անելով։

էս շալակտարի մեղջը գալիս է, առնում է ետ գցում գետը։

– Գնա, սիրում, ձկնիկ, թեող լաց չոլինի թո ծնողը։ Թող չրադարեն քու ընկնդները, Գնա ապրի ու խաղ արա նրանց Հետ։

Ձկնորսը սաստիկ բարկանում է շալակտարի վրա։

— Տո' ախմախ, — ասում է, — էստեղ ջրի մեջ թրջվելով ձուկն եմ բռնում, դու իմ աշխատանջն առնում ես էլ ետ ջուրը գցո՞ւմ... Դե գնա կորի, էլ իմ աչբին չերևաս, էլ իմ շալակտարը չես էս օրից. դնա սովից մեռիւ

Ձեռի տոպրակն էլ խլում է ու Համփու դնում։

— Հիմի ես ո՞ւր գնամ, ի՞նչ անեմ, ո՞նց ապրհմ... տարակուսած մտածելով դառն ու դատարկ վերադառնում է աղջատը դեպի տուն։

2

էս տխուր մտածմունքի ժամանակ ճամփին դեմը դուրս է դալի մի մարդակիրպ Հրեշ առաջը մի դեղեցիկ կով։

— Բարի օր, ախպերացու, էդ ի՞նչ ևս մտլորել, ի՞նչ ես միազ անում, – Հարցնում է Հրեշը։

Աղթատը պատմում է իր գլխին եկածը, Թե ինչպես Հիմի մնացել է անգործ, անձար ու չի իմանում, Թե ռնց պետջ է ապրեն ինջն ու իր կինը։

«Լսի՛, բարեկամ, — ասում է Հրեշր։ — Էս կաթնատու կովը ես ջեզ կրտամ երեջ տարվան ժամանակով։ Ամեն օր էնբան կաթը տա, որ բու կնիկն ու դու կուշտ-կուշտ ուտեջ, ապրեջ։ Երեջ տարին լրացավ Թե չէ, Տենց էն գիշերը կրգամ ձեզ Տարց կրտամ։ Թե Տարցիս պատասխանեցիջ — իմ կովը ձեղ լինի, Թե չէ՝ երկուսդ էլ իմն եր, տանելու եմ, ինչ ուղեմ կանեմ։ Համաձայն ե՞ս։

— Մի բան՝ որ առանց էն էլ սովից մեռնելու ենք, մտածում է աղջատը, — կովը կրտանեմ. էս երեջ տարին կապրենը, մինչև երեր տարվա լրանաչն էլ աստված ողորմած է։ Մի տեղից մի դուռը կրրացվի, կամ գուցե հենց պատաս֊ խանը տալիս ենը, ով գիտի․․․ /

— Համաձայն եմ, ասում է, ու կովն առաջն անում, տանում տուն։

3

Βράρ տարի կթեում են, լիուլի ուտում, ապրում։ Չեն էլ Նկատում, թե ինչպես անցավ երեք տարին. և աճա ճատնում է Նշանակած օրը, որ Հրեշն էն գիշեր պիտի գաւ

Մարդ ու կնիկ վերջալուսի տակ տխուր նստում են դռանը ու միտը են անում, իե ինչ պատասխան տան Հրեշին կամ ով գիտի՝ ինչ կրհարցնի նա. ո՞վ կիմանա Հրեշի միտբըս — Ա՛լ իե ինչ դուս կրգա, երբ մարդ Հրեշի հետ գործ բռնի... Հրեշի հետ հաշիվ ռաննա... Հրեշից լավություն ընղունի... հառաչելով զղջում էին մարդ ու կին, բայց անցկացածն անց էր կացել, էլ հնար չըկար։ Իսկ ղարհուրելի գիշերն արդեն վրա էր հասնում։

էս ժամանակ նրանց մոտենում է մի անծանոթ գեղեցիկ երիտասարդ։

— Ρωρή ήρήψαι», — ասում է, — ճամփորդ մարդ եմ. մութն ընկնում է, ես էլ հոդնած եմ, հյուր չե՞ր ընդունի ձեր տանն էս դիշեր։

- Ընչի չէ, ճամփորդ ախպեր, Հյուրն աստծունն է։ Բայց մեզ մոտ վտանգավոր է էս դիշեր։ Մենք Հրեշից մի կավ ննջ առել էն պայմանով, որ երեք տարի կթենք, ուտենք, երեք տարուցը ետը գա մեղ ճարց տա, թե պատասխանենք, կովը մեղ լինի, թե չէ – իր գերին ենք։ Հիմի ժամանակը լրացել է, էս գիշեր պիտի գա, մենք էլ չրգիտենք, թե ինչ պատասխան տանք։ Հիմի մեղ ինչ անի մենք ենք մեղավոր, վայ թե քեղ էլ վնասի։

– Բան չրկա, որտեղ դուք՝ էնտեղ էլ bu,– պատաս։ խանում է օտարականը։

Համաձայնում են. հյուրը մնում է։

Մին էլ կես-դիշերին դուռը դղրդում է։ Ո՞վ է.— Հրեշը: Խկել եմ որ եկել եմ, դե պատասխանս տվեր։— Ինչ պատասխան. սարսափից մարդ ու կնդա լեզուն կապվում է, մնում են տեղները բարացած։

— Մի՛ վախենաջ, ես ձեր տեղակ սրա պատասխանը կրտամ,— ասում է նրիտասարդ հյուրը ու դնում է դեպի դուռը։

Եկել ե՞մ, — դոան հտերց ձայն է տալիս Հրեշը։
Ես էլ եմ եկե՞լ, — պատասխանում է ներսից Հյուրը։
Ո՞րտեղից ես հկել։
Ծովի էն ափից։
Ընչո՞վ ես եկել։
Աղ մոծակը խամբել եմ, վրեն նստել եմ, եկել։
Ուրեմն ծովը պատիկ է եղել։
Ի՞նչ պատիկ. արծիվը չի կարող մի ափից մյուսը խոչի։
Ուրեմն արծիվը Ճուտ է եղել։
Ի՞նչ մուտ. խևերի շվաջը քաղաք է ծածկում։
Ուրեմն քաղաքը շատ է վուրիկ։
Ի՞նչ փորտիկ. Նապատանիը մի ծայրից մյուսը չի

հասնի։

- Ուրեմն նապատակը ծաղ էլ

— Ի՞նչ ծաղ, մորքին մի մարդու քուրք գուրս կրդա, գլխարկն ու տրեխն էլ ավել։

- Ուրեմն մարդը թզուկ է։

-- Ի՞նչ խվուկ, ծընկան ծերին աբյորը ծուզրուղու կանչի ձենը ականջը չի հասնիլ։

— Ուրեմն խուլ է։

-- Ի՞նչ խուլ. սարում որ պախրեն խոտ որդեի նա կըլսի։ Հրեշը մնում է կապված, մոլորված. զգում է, որ ներսը մի ուժ կա իմաստուն, Համարձակ, անՀաղիելի, էլ չի իմանում ի՞նչ ասի, ու փուս թուշվում, կորչում է գիշերվա խավարի մեջ։

Սրանը նոր մեռած տեղներիցը ետ են դալի, ուրախանում աշխարհրովը մին են լինում։ Հետճ էլ թացվում է րարի լուսը, և երիտասարդ Հյուրը վեր է կենում, մնաջ րարով է ասում, որ դնա իր Հանապարհը։

– Չենբ թողնի, որ չենք թողնի, – առաջը կարում են մարզ ու կին.– դու որ փրկեցիր մեր կյանքը, ասա՛, ինչով ետ վճարենք քո լավությունը...

— Ձէ՞, անկարելի բան է, պետք է դնամ իմ ճանապարհը։

— Դե արոնն անունդ ասա, նթե լավությունդ կորչի ու չրկարողանանը ետ վճարել, գոնե իմանանը՝ թե ում ենդը օրհնելու...

— Լավությունը արա ու թեկուղ ջուրը գցի—չի կորչի։ Ես Հենց էն Խոսող ձուկն եմ, որի կյանքը դու խնայեցիր...– ասում է անձանոթն ու չբանում ապշած մարդ ու կնդա աչբերից։

# ԿՌՆԱՏ ԱՂՋԻԿԸ

L

Ժամանակով լինում են, չեն լինում, մի թույր ու մի ախպեր են լինում։ Քույրը էնջան սիրուն, էնջան շարմաղ է լինում, ինչպես լուսի կտոր, անունն էլ Լուսիկ։

Ախարերը պատկվում է, կնիկ է բերում։

Սա տեսնում է, βե ինչպես ամենքը սիրում են Լուսիկին, ու նախանձը, օձի նման բույն է գնում սրտի մեջ։ Սկսում է Լուսիկին բամբասել ու լացացնել ամեն օր, ամեն օր...

Ախպերը ամեն կերպ աշխատում է ուրախ պահի բրոջը։ Մի՛ն տուն է գալիս՝ հետը ծաղիկ է բերում նրա համար, մյուս օրը միրդ, մի ուրիշ անդամ հաղուստ։

Եվ Լուսիկը մնում է միշտ բարի, գեղեցիկ ու սիրված ամենջից։

Հարսը նախանձից բիչ է մնտոմ տրաբի, մտածում է, ինչ անի, ոնց անի, որ մեջտեղից կորցնի Լուսիկինո

Մտածում է, մտածում է. ու մի օր էլ, երբ մարդը տանից դուրս է դնում, վեր է կենում, տան կահ-կարասին, աման-չամանը իրար գլխով է տալի, ջարդում ու գնում ձեռները ծոցին դռանը կանգնում մինչև մարդու գալը։

Αρ տեսնտում է մարդը գալիս է, սկսում է լաց լինել։ — Ա΄,,— ասում է,— էս էլ բո սիրած բույրը, տանը ինչ ունեինւք-լունեինը՝ ջարդեց։

— Բան չրկա, այ կնիկ, դրա Համար ինչո՞ւ ես լաց լինում. էդ բոլորն էլ առնելու բաներ են։ Աման է՝ կոտրհը, նորը կառնենք, բայց Լուսիկի սիրտը որ կոտրենք, Տետո ի՞նչ անենք։ Կինը տեսնում է, որ էս մինը չեզուվ։ Մյուս անգամ, Երբ մարդը դուրս է դնում, նրա սիրած ձին տանում է, դշում կորցնում ու գալիս ձեռները ծոցին կտերը կանգնում, մինչև մարդը հա է գալի։

— Ա'յ,— ասում է,— էս էլ քո սիրած քույրը, քու էն լավ ծին դուրս է արել, կորդրել, մեպ էսպես տնաքանդ արել։ Մարդը ասում է.

— Բան լրկա. ծի է, կորել է, կաշխատեմ մի ուրիշ ծի էլ կառնեմ, բայց հո չեմ կարող մի ուրիշ քույր առնել։

Չար կինը տեսնում է, որ էս անգամ էլ վուր անցկացավ, ավնլի է կատաղում իրեն կրծում։

Մի գիշեր էլ քնած ժամանակը իր երեխին օրորոցումը մորթում է, արնոտ դանակը թաթուն դնում քնած Լուսիկի գրպանը։

Գիշերվա մի ժամանակը մազերը շաղ է տալի, երեսը պոկում, ճչում, ծղրտում.

- 4wi, bpbfubu, bpbfubu...

Տանըցիք վեր են Թոչում, տեսնում երեխեն օրորոցումը մորթած։ Մնում են սարսափած, սասանած կանդնած։ էս ո՞վ կըլինի, ո՞վ չի լինիլ...

Հարսն աստոն է.

— էլ ո՞վ պետք է լինի. էս տունը մեղանից բացի հո էլ ուրիշ մարդ լի մտել. ման գանք, ում գրպանում արնոտ գանակը գտնենը—նա կրլինի։

Համաձայնում են։ Մած են դալի, արնոտ դանակը Բանում հե Լուսիկի գրպանից։

Մնում են քար կտրած, բայց էլ ի՞նչ...

— է՛ս էլ քո սիրած քույրը,— ճչում է չար կինը ու Երեսը պոկում---Երեխես, երեխես...

Առավոտը լուսի հետ աշխարհրով մին լուրը տարածվում էւ Ժողովուրդը վրդովվում է, դատաստան է պահանջում, մայրը լալիս է, դատաստան է պահանջում, ու գեղեցիկ Լուսիկին քաշում են դատաստանի դուռը։ Դատում են վճոում, կոները կտրում են ու էնպես, կոնատ, տանում, հեռացնում, կորցնում են հեռո՞ւ, հեռո՞ւ անտառներում։

2nd S. Paul willy with S. 1-30

էսպես կռնատ, մեն-մենակ Թափառում է Լուսիկը անբնակ անտառներում։ Շատ Թափառելուց Թփերն ու փշերը Հագի շորերը տանում են, մնում է տկլոր։ Մոծակներն ու մժեղները կծոտում են, ձեռ չի ունենում Թև ջշի, մտնում է մի ծառի փչակ։

Օրերից մի օր Թադւավորի տղեն էս անտառը որսի է գալի։ Որսի շները անտառում էս ու էն կողմն են ընկնում, մի ծառի շրջապատում ու սկսում են հաչել։

Թաղավորի աղեն, իր Տետի մարդիկը մատծում են, նե շները երևի դաղանի հետքի վրա են ընկել կամ որջ են դտել, ու սկսում են շներին հիս անել։

– Հիս մի՝ անիլ ինձ վրա, խագավորի որդի,– ձեն է տալի աղջիկը ծառի փչակից,– ես մարդ եմ, դաղան չեմ։ – Թե մարդ ևս, դե դուրս արի։

— Չեմ կարող, մերկ եմ, ամաչում եմ։

Թագավորի աղևն ծիուց իջնում է, վերարկուն հանում սալիս իր մարդկանց, որ աանեն գցին աղջկա վրա։ Վերարկուն տանում են, գցում են աղջկա վրա. դուրս է գալիս մի սիրուն, մի աննման աղջիկ, որ ոչ ուտես, ոչ խմես, կանգնես ու մտիկ անես։ Թաղավորի աղեն հայիլ-մայիլ է մնում։

- Λ'վ ես դու, υիրուն աղջիկ, β'նչ ես շինում էս անաստում, β'նչու ես մանլ էս ծառի փչակը...

— Ես մի էսպես աղջիկ եմ. աշխարհրումը մի ախպեր ունեմ. բայց ախպերն էլ է ինձ թողել, աշխարհըն էլ...

— Ախակերդ էլ է բեզ Թողել, աշխարհբն էլ, բայց ես չեմ Թողնիլ,— ասում է արջաորդին ու առնում է Լուսիկին տանում իրենց տունը։

Տանում է իրենց առանը, Հորն ու մորը Հայտնաս, թե պետը է պսակվի նրա Հետ։

— Բե սրա հետ կրպսակվեմ, լավ, թե չէ հո՝ ինձ մի փորձանջի կրտամ։

Հերն ու մեթեն ասում են.

– Ա՛յ որդի, աշխարհրի աղջիկները հո վերջացել չեն. Թագավորի աղջիկներ կան, նազիր-վեղիրների աղջիկներ կան, Տարուստ, դեղեցիկ... էդ կռնատ, տկլոր, անտեր աղջիկն ո՞վ է, որ դու դրան ուղում ես։ — Չէ՞, որ չէ...

Հերն ու մերը Տարահատված իրենց քաղաջի խելոք մարդկանց հավաբում են, մի խորհուրդ են հարցնում, ին ինչպես անեն, իրենց որդուն էդ կռնատ աղջկա հետ պսակեն, թե չէ։

Խելոր մարդիկ ասում են.

— Մարդ ու կնկա բախար որ կա՝ սրտիցն է։ Ձեր աղի բախան էլ, երևի, էդ աղջիկն է, որ սիրտը կպել է դրան։ Աստված դրանց համար էլ, էդպես է բարի տեսել։

էս որ լսում են՝ Տերնւ ու մերն, էլ համաձայնվում են, յոխն օր, յոխը գիշեր հարսանիք են անում, ու խադավորի տղեն ամուսնանում է գեղեցիկ Լուսիկի հետո։

Մի առժամանակ ունց է կենում, էս թագավորի տղեն գնում է հեռու երկիր։ Գնալիս տանը պատվիրում է, որ երթ կինը ծնի՝ իրեն տեղեկություն գոնն։ Պատվիրում է ու գնում։

Սրա դնալուց մի քանի ամիս անց է կենում, Լուսիկը աղատվում է, մի սիրուն, շարմադ, ոսկեղանդուր տղա է ծնում։

Թաղավորն ու խուղուշին էնպես ուրախանում են, էնորես ուրախանում են, որ աշխարհրովը մին են լինում։ Աչջալուս են դրում, նամակը տալիս են սուրհանդակին, ուղարկում են։ Դու մի ասիլ, էս նամակը տանողը գնում է ճանապարհին հյուր է ընկնում Լուսիկի նղթոր տանը ու գիշերը մնում է նրանց մոտ։ Իրիկունը գրույց անելիս պատմում է, խի՝ հապա՞, էսպես-էսպիս մի բան է պատահել ու հիմի աչբալուսի խուղն եմ տանում Թաղավորի աղին։

Չար Հարսը էստեղ գլխի է ընկնում լանը։ Գիշերվա մի Ժամանակը վեր է կենում, էս մարդի գրպանից նամակը Հա-Նում, կրակը գցում ու ինքը մի նոր նամակ գրում, դնում տեղը։ Գրում է, Թե՝ Հապա չես ասիլ, քու գնալուց ետը կինդ ծնեց՝ մի շան լակոտ բերա՞վ... Էսպես խայտառակվեցինը աշխարհքի մեջ. Հիմի քեղ իմացնում ենք—գրի ինչ անենք, ինչ չանենք։ ՍուրՇանդակը էս Նամակը տանում է տալի Թագավորի տղին։ Կարդում է Թագավորի տղեն ու շա՜տ շատ վշտանում։ Հորն ու մորը նամակ է գրում, Թե իմ բախտն էլ երևի էդ է եղել. ինչ որ աստված տվել է—իմն է, պահեցեջ, կնկանս էլ մի Թխու խոսջ չասեջ, մինչև ես դամ։

Գրում է, նամակը տալիս սուրհանդակին, ետ դրկում։ Էս սուրհանդակը վերադարձին դալիս է կրկին իր հյուրատունը ու էլի գիշերը մնում է նրանց մոտո

Չար Հարսը գիջնրվա մի ժամանակն էլի վեր է կենում, սրա գրպանից թաղավորի աղի նամակը Հանում, գցում կրակը, խնթը մի նորը գրում, գնում տեղը։ Գրում է, թե՝ իմ կինն ինչ որ ծնել է, իր ծնած շան լակոտը գոշիցը կըկապեր ու գուրս կաննը, կըկորցներ, որ ես չըգամ ու մեր տանը ահսնեմ, թե չէ ինձ մի փորձանքի կրտամ։

Հերն ու մերը էս Նամակը որ ստանում են, մնում են կարմայած։ Ասում են,

— էս ի՞նչ բան է. ինջը բերավ մեր կամջին հակառակ Տետը պսակվեց, Տիմի էլ գրում է, Թև՝ գուրս արեջ...

Շատ հն տխրում, շատ է մեղքները գալի, րայց ինչ որ դրել էր՝ պետք է կատարեին։

Բերում են երեխին կապում են մոր դոշիցը, լաց են լի-Խում, օրՀնում են ու իրենց տանիցը դուրս են անում։

Երեխեն դոշիցը կապած՝ Լուսիկը գնում է լալով։ Անց է կենում խոր ձորեր, մուք անտառներ, անբնակ դաշտեր, ընկնում է մի անջուր, ամալի անապատ։

էս անապատում՝ ծարավ, ջրչոր՝ գնում է, գնում է, շատ է գնում, թե ջիչ է գնում, շատն ու ջիչն էլ աստված գիտի – հասնում է մի ջրհորի։ Նայում է ջրհորի մեջը, աչջին թվում է, թե ջուրը մոտիկ է։ Կռանում է թե ջուր խմի՝ Երհխեն գրկիցը ընկնում է ջրհորի մեջը, Ճչալով ջրհորի էս կողմն է թոշում, էն կողմն է թոչում, Հանկարծ ետևից մի ձեն է գալը. – Մի՛ վախիլ, աղջիկ ջան, մի՛ վախիլ, հա՛նի...

ծա է նայում, ահսնում՝ սիպտակ միրութը մինչև գոտկատեղը մի ծերունի։ Ասում է.

— Ո՞նց Հանեմ, չեմ կարող, պապի ջան, ձեռներ չունեմ։

— Հա'նի, Տա'նի, ազջիկ ջան, ձեռներ ունես, մեկնի... Լուսիկը կոները մեկնում է, ձեռները բացվում են, ու Երեխեն ջրհորից հանում է։ Ետ է դառնում Թե շնորհակալուխյուն անի, տեսնում է ծերունի յրկա, աներևութացել է։

Սրան էստեղ խողնենք իր երեխի Տետ ու Տիմի ո՞ւմնից տեղեկություն տանք։ Հիմի տեղեկություն տանք խաղավորի աղիցը։

Թագավորի տղեն օտարությունից վերադառնում է, ամեն բան իմանում է, ու էլ տուն չի մտնում. դռնից ետ է դառնում, գնում է աշխարհը է աշխարհը ման գա, որ իր կնկանն ու երեխին գտնի։

Գնում է ման է դալի. էս կողմը հարց ու փորձ, էն կողմը հարց ու փորձ, մի տեղ պատահում է մի մարդում

- Puph opt

-- Աստծու բարին։

— П"ір шпше ршррі

- Իմ բրոջն եմ ման դայի։

— Դե մինս չոլինենը, երկու լինենը, գնանը, հո էլ իմ կնկան... երեխիս եմ ման գալի։

Ընկերանում են, գնում են ման են գալի, մի տարի, Երկու տարի, երեք տարի, ոչ տեղն են իմանում, ոչ տեղեկուβյուն։ Էս թագավորի տղեն վերջը գալիս մի մեծ Հանապարհի վրա քարվանսարա է պահում, ընկերն էլ իր տուն ու տեղը, իր կնկանը բերում է ու էնտեղ ապրում են, որ գուց. Թե դնացող-եկողից մի բան իմանան։

Մի անգամ էս թարվանսարի դուռն է դալի մի ազրատ կին իր փոջրիկ աղի հետո

Թադավորի աղեն իր ընկերոջը ասում է.

— Եկ Ներս կանչենը էս աղքատ կնկանն ու իր երենին։ Սրանք լավ Հեքիաններ են գիտենում ու լավ էլ պատմում են. Հեքիան կրպատմի, մենք էլ դարդի տեր մարդիկ ենք, կըլսենք, գիշերն անց կրկենա։

Ընկնրոջ կնիկն էն կողմից Հակառակում է, թե՝ մենք Հակիվ ննջ տեղավորվում, դրանց ո՞րտեղ բերենջ։

Թագավորի տղեն որ շատ խնդրում է, ներս են թողնում

մուղացվան կեկանն ու իր երեխին։ Մերը պատի տակին կուչ է գալի, երեխեն էլ կողջին։ Թագավորի աղեն ասում է.

— Քումմերս չի տանում, ջուրիկ, Տեբիաթից, ասակից կիմանաս, պատմի լսննը, գիշերն անցկենա։

— Ես ոչ հեջիան գիտեմ, ոչ առակ,— պատասխանում է աղջատը,— հս մի ճշգրիտ պատմունյուն գիտեմ, մի պատահած դեպը և շատ հետաըրջրական. Թև կուղեք, պատմեմ, լսեցեք։

— Լավ, էդ պատմի։

Ու աղբատ կինը սկսում է պատմել։

— Մի ժամանակ մի աշխարհրում լինում են, չեն լինում, մի բույր մի ախպեր են լինում։ Ախպերը պատկվում է, կին է բերում, մի չար ու նախանձոտ կին։

Տանտիկինը էն կողմից բարկանում է.

— Հը՛, սկսեց պիրիցը դուրս տալ։

— Ա՛յ կնիկ, ի՞նչ ես ուղում, ինչո՞ւ ես խանդարտաք, Թող պատմի,— նեղանում է մարդը։--- Պատմի, բույրիկ, դու պատմի...

Աղքատ կնիկը շարունակում է իր հերիաթը.

- Քույրը մի դեղեցիկ ու թարեսիրտ աղջիկ է լինում, ամենւթը սիրում են նրան։ Ախպերն էլ ամեն տումս դալով միջա ճրա Համար մի բան է բերում՝ կամ ծաղիկ, կամ միրգ, կամ Հագուստ և կամ Թե չէ՝ մի թաղցր խոսք է ասում։ Նախանձում է չար Հարսը, Հնարբներ է մտածում, Թե ինչպես անի, որ կորցնի դեղեցիկ աղջկանը։

— Հը, դե տեսեր ինչ է ասոտ՝ է՛ս անզդամը... – կրկին մեզ է ընկնում տանտիկինը։

— Ա՛յ կնդեպ, ի՞նչ պատոանեց բեզ. Թող լսենը, տեսնենը ինել է ատում։ Դու չարումնակի, բույթիկ, սրան ականջ մի դեսիլ։

Unpurn Wiphp zupnchulyned f.

— Հնարըներ է մտածում չար հաղոր։ Մի օր տան կահկարապեն է ջարդում ու դնում անմեղ աղջկա վրա, մյուս օրը մարդու պերած ձին է բաց Թողնում, կորցնում ու մեղադրում բրոջը. տեսնում է բան չի դառնում, վերջը իր երեխին օրորոցի մեջ մորքում է, դանակը դնում ընած աղջկա գըրպանը...

— Ձենդ կարի, լիրբ, անզգամ, ո՞վ է իմացել, որ մերն իր երեխին մորթի, \_\_ ճլում է տանաիկինը։

— Ի՞նչ ես ընդՏատում,— գոռում է մարդը կնոջ վրա։— Թող պատմի, չե՞ս տեսնում՝ ինչ Տետաջրքրական բան է պատմում։

Աղբատը շարունակում է.

— Դատաստան են անում, կտրում են անմեղ աղջկա կոնները ու Լնպես կռնատ հալածում, կորցնում՝ հեռո՞ւ, հեռո՞ւ...

Հալածված թափառում է նա անծանոթ անտառներուն։ Են երկրի թաղավորի աղեն օրերից մի օր որսի է դուրս գալի էն անտառները, գտնում է գեղեցիկ աղջկանը ու պսակվում է նրա հետ, Թագավորի աղեն հետու երկիր է գնում։ Նրա գնալուց հետո կինը ծնում է մի ոսկնգանգուր երեխա։ Աչբալուսի ճամակ են դրում հորը։ Նամակատարը համփին հյուր է ընկնում կոնատ աղջկա եղբոր տունը։

Չար Տարսը գիշնրը փոխում է նամակը, նոր նամակ է գրում Թագավորի աղին, Թև՝ «բու կնիկը ծնել է, շան լակոտ է բերել...»։

— Սո'ւս, Հերիք էր ինչ որ տակից-գլխից դուրս տվիր, դուրս կորի գնա, — կատաղում է տանախկինը։

— Ախպեր, կնկանդ ասա Հանգիստ կննա, լոենը, տես-Նում ես ինչ պատմություն է անում, – խնդրում է թագավորի տղեն ընկերոջը։

Աղքատը շարունակում է.

— Թագավորի տղեն կարդում է փոխած նամակը, վրշտանում է, բայց էլի գրում է, որ պահեն, մինչև խնթը կլթրա։ Նամակատարը վերադարձին կրկին Տյուր է ընկնում նույն տունը։ Ես նամակն էլ է փոխում չար հարսը ու գրում է, թե՝ «Նամակն ստանալուն պես իր ծնածը կրծրիցը կապեցեր ու գուրս արեր իմ կնոջը», էս ճամակն ստանում են թագավորն ու թագուհին, շատ են պարմանում, շատ են տանցվում. բայց ինչ անեն – կատարում են ինչ որ դրած է. հրեխին մոր դոշիցն են կապում ու ղուրս անում։

— էս ո՞րտեղից եկավ էս շունը, – ազաղակում է տանտիկինը։

— Բավական է, – դոռում են վրեն մարդն ու թագավորը տղեն։ – Պատմի, բույրիկ, Հետո^... Հետո^...

Աղթատը շարունակում է.

— Հետո թագավորի տղեն տուն է դալի։ Լսում է ինչ է պատանել, հա է դառնում, գնտւմ է իր կնոջն ու երեխին ման գալու։ Պատանում է կռնատ աղջկա եղթորը։ նա էլ դուրս էր եկել իր քրոջը ման դալու։ Ընկերանում են ու ման են գալի։ Շատ են ման գալի, չեն գտնում։ Գալիս են, մեծ Հանապարնի վրա մի քարվանսարա են պանում...

— Սուտ է ասում, — գոչում է տանտիկինը։ Իսկ մարդն ու թաղավարի տղեն ապուշ կտրած սպտսում են վերջին։ Եվ աղջատ կինը հասնում է վերջին.

— Սոված ու ծարավ Թափառում է Տալածված մերը իր ոսկեզանդուր երեխի հետ, վերջը աղջատ, տկլոր գալիս է, հասնում էդ քարվանսարայի գուռը... Ախսկերն ու ամուսինը մեղքանում են, չերս կանչում, խնդրում են, որ մի հեքիա/ տոի իրենց համար...

– Վա՜լ...– տւշաթափվում է տանարկինը։

— Լուսիկ ջա՞ն... մի՞քե դու ես... վեր են թռչում թագավորի տղեն ու ընկերը, Լուսիկ ջան...

— Հա՛, ձևր Լուտիկն եմ ևս, ահա իմ ախպերը, ահա իմ ամուսինը, ահա իմ ոսկեդանգուր երեխան, և ահա լար հարսը...

Լեզվով չի պատոնվիլ, Թե ինչպես են ուրախանում ամենջը, որ իրար որոնտւմ էին ու գտնում են վերջապես։

Իսկ չար Հարսին կապում են կատաղի ձիու պոչից ու րաց են Թողնում արձակ դաշտերում։ Որտեղ արյոմսն է կա-Թում, էնտեղ փուշ ու տատասկ է դուրս գալի, որտեղ արտասութն է Թափվում, էնտեղ լիճ է դոյանում։ էն լճի խորբում երևում է մի երեխա՝ քնած օրորոցում, դանակը դրած դլխի տակին, Ասում են՝ երևում է և մի վանք. էն վանքում չոքած է մի կին ու լալիս է, լալիս է, անվերջ լալիս էւ

## 1909

### ԱՆՀԱՂԹ ԱՔԼՈՐԸ

Լինում է, լի լինում՝ մի աջլոր է լինում։ Էս աքլորը թուջուջ անելիս մի տսկի է գտնում։ Կտուրն է բարձրանում, ձեն է տալի. — Սուդրուղո՞ւ, փող Եմ գտե՞լ... Թագավորը լսում է, իր նազիր-վեղիրին Տրամայում է՝

գնան խլեն ընթեն։ Խագավորը լսում Հ, իր նազրը-վօվրրին շրասայուս է

Նաղիր-վեդիրը դնում են՝ իլում բերում։ Արյորը կանչում է.

— Մուղրուղո՞ւ, թագավորն ինձանով ապրե՞ց...

Թադավորը ոսկին ետ տալիս է իր նազիր-վեզիրին, ասում է.

— Ստ տարեր իրեն տվեր, Թև չէ աշխարհրովը մին կիսայտառակի մեղ էդ անպիտանը...

Նազիր-վեզիրը ոսկին տանում են ետ տալիս աթլորին։ Աթլորն էլ կաուրն է բարձրանում.

- Ծուղրուղո՜ւ, թագավորն ինձանից վախե՞ց...

Թագավորը բարկանում է, իր նաղիր-վեգիրին հրամայում է.

— Գնացն'ը,— ասում է,— բռնեցեը էդ սրիկային, դլուխը կտրնցեր, եփեցեր բերեր ուտեմ, պրծննմ դրանից։ Նազիր-վեզիրը գնում են արլորին բռնում, որ տանեն։ Տանելիս կանչում է.

- Մուղրուղո՞ւ, թագավորն խնձ հյուր է կանչե՞լ...

Տանտում են մորթում, պղինձն են կոխում, որ նփեն, ձեն է տալի.

— Ծուղրուղո՞ւ, Թագավորն ինձ տաք-տաք բաղնիք է դրկե՞լ...

Եփում են բերում խագավորի առաջն են դնում, կանչում է.

- Թաղավորի հետ սեղան եմ նստե՛լ, ծուղրուղո՞ւ...

Թագավորը շտապով վերցնում է կուլ տալի։ Կոկորդով գնայիս կանչում է.

— Նեղ-Նեղ փողոցՆերով անց եմ կենում, ծուղրուվո՞ւ... Թագավորը որ տեսնում է՝ կուլ տվեց, էլ չի ձենը կրտրում, իր նազիր-վեզիրին հրամայում է թուրները հանած պատրաստ կենան, որ մին էլ ձեն ածի— ղարկեն։

Նադիր-վեգիրը թերը հաճած՝ պատրաստ կանդնում են մինը էս կողմը, մյուսը էն։

Աբլորը որ թաղավորի փորն է հասնում, ձեն է տալի.

- Լուս աշխարհրունն էր, մութ տեղն եմ ընկել, ծուլրուղո՞ւ...

— Զարկեցե՛ ... Հրամայում է թագավորը։

Նագիր-վեգիրը զարկում են, տալիս են **թադավորի** փորը պատոռմ

Աբլորը դուրս է պրծնում, փախչում է, կտեր ծերին կանդնում ձեն տալի.

— Ольприят....

## 1910

### ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

Ժամանակով մի մարդ ու մի կնիկ են լինում։ Էս մարդ ու կնիկը իրար հավանելիս չեն լինում։ Մարդը կնկանն է ասում հիմար, կնիկը մարդուն, միշտ կռվելիս են լինում։

Մի օր էլ մարդը մի քանի փութ եղ ու բրինձ է առնում, տալիս մշակի շալակը, տանում տուն։

Կնիկը բարկանում է.

— Ա՛յ, որ ասում եմ Տիմար ես, չես հավատում. էսրան Եղն ու բրինձը միանդամից ինչի՞ համար ես առել բերել. Տորդ բե՞լեխն ես տալիս, Թե տղիդ հարսանիքն ես անում։ -- Ի՞նչ բելեր, ի՞նչ հարսանիք, այ կնիկ, ի՞նչ ես խո-

սում, տար պահի, բարեկենդանի համար է։

Կնիկը հանդատանում է, տանում է պահում։

Անց է կենում մի առժամանակ, էս կնիկը սպասում է, սպասում է, բարևկննդանը դալիս չի։ Մի օր էլ շեմբումը Նստած է լինում, տեսնում է մի մարդ վռաղ-վռաղ փողոցով անց է կենում։ Ձեռը դնտոմ է ճակատին ու ձեն տալի.

– Ա՛խաղեր, ա՛խաղեր, հալա մի կանգնի։

Տղեն կանգնում է։

– Ա՛խագեր, բարեկենդանը դու հո չե՞ս,

Անցվորականը նկատում է, որ էս կնկա ծալը պակաս է, ասում է՝ Հա՛ ասեմ, տեսնեմ ինչ է դուրս դալի։ — Հա, ես եմ բարեկենդանը, թույրիկ ջան, ի՞նչ ես ասում։

-- Էն եմ ասում, որ մենք քո ծառան հո չենք, որ բո եղն ու բրինձը պահենք։ Ինչ որ պահեցինք, հերիք չէ՞... չես ամաչո՞ւմ... Ընչի՞ չես գալի քո ապրանքը տանում...

— Դե էլ ի՞նչ ես նեղանում, բույրիկ ջան, ես էլ Տենց դրա Տամար եմ եկել, ձեր տունն էի ման դալիս, չէի դանում։ — Դե արի տար։

էս մարդը ներս է մտնում, սրանց եզն ու թրինձը չալակտւմ կրունկը դեսն է անում, երեսը դեպի իրենց գյուղը։

Մարդը պալիս է տուն, կնիկն ասում է.

— Հա՛, էն բարեկենդանձն եկավ, իր բաները իրեն սեցրի տարավ։

– Ի՞նլ բարեկենդան... ի՞նչ բաներ...

– Ա՛յ էն հղն ու բրինձը... Մին էլ տեսնեմ՝ վերևից գալիս է. մեր տունն էր ման գալի. կանչեցի, մի լավ էլ խայտառակ արի, շալակը ովի տարավ։

— Վայ բու անկսելը տունը թանդվի, որ ասում եմ հի-Մար ես — հիմար ես էլի... Ո՞ր կողմը գնաց։

— Ալ էն կողմը։

էս մարզը ձի է ճստում, ընկնում բարեկենդանի նտևից։ Ճանապարհին բարնկենդանը հա է մտիկ անում, տեսնում է՝ մի ձիավոր բշած գալիս է։ Գլիրի է ընկնտոմ, որ սա էն կնկա մարդը պետք է լինի։

Գալիս է հատնում իրեն։

– Բարի օր, ախպերացում

— Աստծու ըարին։

- Հո էս ճամփովը մարդ չի անցկացավ։
- -- Անցկացավ։
- Ի՞նչ ուննը շալակին։
- Եղ ու բրինձո
- Հա, հենց էդ եմ ասում։ Ի՞նչքան ժամանակ կըլինի։
- Բավականին ժամանակ կըլինի։
- Որ ձին բշեմ՝ կըհասնե՞մ։

— Ո° μπեղից կը Չամնես, գու ձկով, նա ուռով։ Մինչև բու ծին չորս ոտը կըփոխի— մի՞ն, երկո՞ւ, երե՞ր, չո՞րս նա երկու ռառով մե՛կ-երկո՞ւ, մե՛կ-երկո՞ւ, մե՛կ-երկո՞ւ, շուտշուտ կըդնա, անց կըկենա։

— Բա ի՞նչպես անեմ

-- Ինչպես պետը է անես, ուղում ես, ձիդ թող ինձ մու դու էլ նրա պես տառվ վաղի, գուցե հասնես։ --- Հա՛, էդ լավ ես ասում։

Վեր է գալիս, ձին Ոսղնում սրա մոտ ու ստով ճանապարճ ընկնում։ Սա ճեռանում է Ձե չէ, բարեկենդանը շալակը բարձում է ձիուն, ճամփեն ծռում, բշում։

էս մարդը ոտով գնում է, դնում է, տեսնում է չրճառավ, Եա է դառնում։ Ետ է դառնում, տեսնում՝ ձին էլ չրկա, Գալիս է տուն։ Նորից սկսում են կռվել, մարդը եղ ու բրինձի Տամար, կնիկը ձիու։

Մինչև օրս էլ էս մարդ ու կնիկը կովում են դեռ։ Սա նրան է ասում հիմար, նա սրան, իսկ բարեկենգանը լսում է ու ծիծաղում։

## ՍՈՒՏԼԻԿ ՈՐՍԿԱՆԸ

Հորս կնունքով, մորս ծնունկով, վեր կացանք մի օր հինդ ու վեց հարով, Թրով-Թվանքով որսի դնացինը։ Հադին էր, Հյուդին էր, Չատին էր, Մատին էր, հերս էր, ես էի, դնացինը որսի...

Սարեր, ձորեր դուզ դնացինը, որտեղ որս կար՝ սուս փուս գնացինը, որտեղ ահ էր՝ կտւզ ու կուղ գնացինը...

Գնացի՞նը, պնացի՞նը, շատ թե ջիլ, մին էլ տեսնենը Երեր լիճ. երկուսը ցամար, մընի մեջ էլ ըսկի ջուր լըկա։ Մին էլ, ըՉը, մտիկ տանը, որ էս անջուր լճում լողում են ճչում երեր Չատ սիպտակ բաղ, երկուսը սատկած են, մինն էլ կենդանի չի։

Հաղի՛, տո՛ւր հա, տո՛ւր։
Թե՝ Եվանք չունեն։
Հյուղի՛, տո՛ւր հա, տո՛ւր։
Ես էլ չունեն։
Չատի... Մատի...
Մենք էլ չունենը։
Բա ի՞նչ անհնջ...

2πρυ ձեռին կարճ ու երկար, Տաստ ու բարակ մի փետ կար. երեսն առավ, նշան դրեց, մին էլ տրա՜ք, որ կրակեց... Նա կրակեց, ես զարկեցի. որ զարկեցի` փռվեց էսպես ամեն թներ հինգ գաղ ու կես...

էս անըերան դանակը ջաշնցինը։ Հաղին մորինց, չըկարաց. Հյուղին մորինց, չըկարաց, Չատին չրկարաց, Մատին չրկարաց, հերս էլ չրկարաց, ե՛ս ջաշնցի մորինցի։

Մորնեցի, վեր գցեցի. բաղ մի ասիլ—մի գոմեշ ասա Հապին շալակեց, չբկարաց, Հյուդին։ շալակեց, չրկարաց, Չատին չրկաթաց, Մատին չբկաթաց, Հերս էլ չբկարաց, ե՛ս Հալակեցի, Շալակեցի, գնացինը։

Գնացինը, դնացինը, հասանը մի տեղ, մին էլ տեսնննը երեր դեղ, երկուսի տեղն իսկի չի երևում, մընումն էլ իսկի շենլիկ չրկա։ էս անշեն դեղում դես ման եկանը, դեն ման եկանը, մի տուն դտանը, մեջը եթեր պառավ, երկուսը մեռած, մընկ բերևումն էլ շունչ չրկա։

– Տղերը, ասինը, եկեր բաղով փլավ անենը։

. Ես անջուն, պառավը դնաց դես ման եկավ, դեն ման եկավ, կես բրինձն դտավ, երեր պղինձ, երկուսը ծակ, մինծ էլ իսկի տակ չունի։

Ջուրը լցրինը էս անտակ պզինձը, մեջը ածինը բաղն ու բրանձը, անկրակ հփեցինը։ Եփեց, եփեց, միսն ու րրինձը պետցին, քնաց բուրը։

Որաից նկած օոված մարդի՞կ, վրա նկանը, կերա՞նը, կերա՞նը. ոչ աչբներս բան տեսավ, ոչ բերաններս բան Քատփո

## 1911

## ԱՆԲԱՆ ՀՈՒՌԻՆ

Լինում է, չի լինում մի կնիկ։ Էս կնիկը մի աղջիկ է ունենում՝ անումը Հուռի։ Մի ծույլ, անշնորճը աղջիկ։ Օրը մինչև իրիկուն պարապ-սարապ նստած։

Բածն ինչ կանեմ՝ կեղտոտ է. Բամբակը կորիզոտ է։ Մաստակ պիտի, որ ծամեմ, Կրտերը տիտիկ անեմ, Անցնողին մրտիկ անեմ. Ուտեմ, իսմեմ, Մըթնի, բրնեմ։

Հարևանները անունը դնում են Անբան Հուռի։ Ինչ մերն է՝ աղջկանը դովելով ման է գալի.-- լիդրը գղող, լիդրը մանող, համ խըճճող, համ խճուճը հանտղ, ձևող-կարող, հունցող-Թխող, եփող-Թափող, մի խոսքով՝ հուրի-հրեղեն, մատները ոսկիւ

էս դովասանքը գնում մի նրիտասարդ վաճառականի ականջն է ընկնում, էս երիտասարդ վաճառականն ասում է՝ իմ ուղածն էլ հենց սա է, տր կա, Գլխապատառ գալիս է անբան Հուռիին ուղում է, հետը պսակվում, տանում իրենց աունը։ Մի քանի ժամանակից ետը մի տասը-ջսան բեռը սամբակ է առնում տալիս խնկանը, ԹԵ՝ ես գնում եմ գեռու աներեր առուտուրի, դու էլ էս բամբակը զդի, մանի, գամ տահեն ծախեմ, «արստանածը։

Անբամ Հուռին է, իրեն համար մաստակ ծամելով ման է գալի։ Մի օր էլ գետի ափովն անց կենալիս լսում է, որ գորտերը կռկռում են։

\_ *Փե*՝ փել... Կե՛ կել... Փև՝ փել... Կև՝ կել...

– Վո՛ւլ, աղջի Փեփել, Կեկել,– ձեն է տալի անբան Հուռին,– որ բամբակը բերեմ ձեղ տամ՝ կըգղ<sup>ե</sup>ր...

— Fb'p, eb'p, eb'p...

Անթան Հուռին ուրախանում է։ Գնում է բամիակը կրում բնթում, ածում գնտը։

– Դև զղեցեջ, մանեցեր։ Մի բանի օրից ետ կրգամ, մանածը կրտանեմ, որ ծախննը։

Գնում է մի բանի օրից ետ է դալի։

Գորտերը էլի կռկռում են.

- Φέ'ψbi-4b4bi... Φέ'ψbi-4b4bi...

- Աղչի Փե՞փել, Կեկել, ղե մանածը բերհը։

Գորտերը շարունակում են կոկռալ, իսկ մանածը չեն բերում։

Հուռին մին էլ որ ճայում է, ալքովն ընկնում է դետի ափերին ու ջարերին փաթարված կաճալ մուռը։

— Վո՜ւլ,— ասում է,— թոռանամ ես, տե՛ս, Համ զգել ու մահել են, Համ քսալիչա են պործել իրենց Համար։

Ձևոր ճակատին է դնում ձեն տալի.

— Դե որ խալիչա եր գործել, մեր բամբակի փողը բեթեթ։ — Ձեն է տալի ու ոտը փոխում է, մանում ջուրը։ Հանկարծ ոտը առնում է մի կոշտ բանի։ Հանում է տեսնում՝ մի կտոր ոսկի։ Փեփելին ու Կեկելին շնորհակալություն է անում, ոսկու կտորը փեշը դնում, գալիս տուն։ Մարդն էլ առուտութի տեղիցն է գալիս։ Գալիս է տեսնում՝ իրենց թարեջին մի մեծ ոսկու կտոր։

- lk 4264, tu p\*22 nulp ti

Թե՝ բա չես ասիլ բամրակը Փեփելի ու Կեկելի վրու ծախեցի. բամբակի փողն է։

Մարդը ո՞նց է ուրաքսանում, էնպես էլ դուք ուրաքսա-

